10.qxd 23/05/2025 16:25 Page 1

ԳԵՂԱՄԱ աշխարհ

Քաղաքական, հասարակական, մշակութային թերթ 23 մայիսի 2025թ. թիվ 10 (614)

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆ ՕԼԻՎԻԵ ԴՐԿՈՏԻՆՅԻՆ

Մայիսի 14-ին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Օլիվիե Դրկոտինյին եւ Ֆրանսիայից ժամանած մի խումբ երիտասարդ դիվանագետների, ովքեր աշխատանքային փորձ ձեռք բերելու նպատակով գտնվում են Հայաստանի Հանրապետությունում:



Ողջունելով դեսպանին, Կարեն Սարգսյանը ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի եւ Ֆրանսիայի Հանրապետության Իզերի մարզի միջեւ ծավալված համագործակցության շրջանակներում իրականացված եւ ընթացքի մեջ գտնվող ծրագրերը, արդյունքներն ու ձեռքբերումները եւ առաջիկա անելիքները առողջապահության, կրթության, մշակույթի, գյուղատնտեսության եւ զբոսաշրջության ոլորտներում:

Օլիվիե Դրկոտինյին, բարձր գնահատելով Գեղարքունիքի եւ Իզերի մարզերի միջեւ ծավալված տասնամյակների համագործակցությունը, հույս հայտնեց, որ կողմերի ակտիվ ջանքերի, նոր գաղափարների ու ծրագրերի շնորհիվ ավելի կընդլայնվեն համագործակցության ոլորտները, կխորանան բարեկամական կապերը, կակտիվանան փոխադարձ շփումները: Միաժամանակ դեսպանը մարզպետ Կարեն Սարգսյանին հրավիրեց՝ մասնակցելու 2025 թվականի հունիսի 1-ից 3-ին Գորիս քաղաքում կայանալիք Հայաստան-Ֆրանսիա ապակենտրոնացված համագործակցության 5-րդ համաժողովին:

-Այն ակտիվ համագործակցությունը, որ դուք ծավալել եք Իզերի դեպարտամենտի հետ, հիանալի օրինակ կլինի նաեւ Հայաստանի ու Ֆրանսիայի մյուս տարածաշրջանների համար, համաժողովի մասնակիցները կհամոզվեն, թե իրականում, ձեր իսկ ձեռքբերումների օրինակով, ինչ տեսանելի արդյունքներ կարող են գրանցել հայկական ու ֆրանսիական համայնքները կամ տարածաշրջանները բարեկամական կապերի հաստատման, տնտեսական-մշակութային փոհամագործակցության հաստատման դեպքերում,- նշեց Օլիվիե Դրկոտինյին:

Հանդիպան ընթացքում կողմները քննարկեցին նաեւ տնտեսական ու մշակութային համագործակցության հեռանկարների հետ կապված հարցեր:

«Գեղամա աշխարհ»

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 16 ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԿԻՐԿԱՆԱՑՎԵՆ ՀՐԱՏԱՊ ԾՐԱԳՐԵՐ

Գեղարքունիքի մարզի 16 դպրոցների հատկացվել է 280 միլիոն 61 հազար 400 դրամ՝ 8 դպրոցներում մարզադահլիճների վերանորոգման եւ եւս 8-ում՝ ջեռուցման համակարգի կառուցման համար:

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը 2024 թվականի ընթացքում աշխատանքային այցերով եղել է մարզի մի շարք դպրոցներում, որոնց ընթացքում վեր է հանել տվյալ դպրոցներում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրները եւ դրանք ներկայացրել ՀՀ Կառավարություն:

Գեղարքունիքի մարզպետի կողմից բարձրացված խնդիրները համապատասխան արձագանք են գտել, որի արդյունքում ՀՀ կառավարության հերթական նիստում որոշում է կայացվել՝ Գեղարքունիքի մարզային ենթակայության 16 կրթական օբյեկտների շենքային պայմանների բարելավման եւ գույքի ձեռքբերման նպատակով հատկացնել կապիտալ դրամաշնորհներ՝ 280 միլիոն 61 հազար 400 դրամի չափով:

Տրամադրված գումարից 15 միլիոն 24 հազար դրամ հատկացվել է Գավառ համայնքի Գանձակ բնակավայրի թիվ 1 միջնակարգ, 24 միլիոն 424,3 հազար դրամ՝ Գավառ համայնքի Գանձակ բնակավայրի թիվ 2 միջնակարգ, 23 միլիոն 557 հազար դրամ՝ Գավառ քաղաքի Մ. Բունիաթյանի անվան թիվ 8 միջնակարգ, 17 միլիոն 928,3 հազար դրամ՝ Գավառ համայնքի Լճափ բնակավայրի միջնակարգ, 20 միլիոն 769,8 հազար դրամ՝ Ճամբարակ քաղաքի Մ. Քոչարյանի անվան թիվ 2 հիմնական, 7 միլիոն 199,7 հազար դրամ՝ Մարտունի համայնքի Վարդենիկ բնակավայրի Ռ. Հովհաննիսյանի անվան թիվ 1 հիմնական, 11 միլիոն 114,1 հազար դրամ՝ Սեւան քաղաքի թիվ 6 միջնակարգ, 25 միլիոն 875,8 հազար դրամ՝ Վարդենիս քաղաքի թիվ 4 հիմնական դպրոցների մարզադահլիճների վերանորոգման համար:

20 միլիոն 663,9 հազար դրամ հատկացվել է Գավառ համայնքի Նորատուս բնակավայրի թիվ 3 միջնակարգ, 38 միլիոն 700 հազար դրամ՝ Գավառ համայնքի Նորատուս բնակավայրի Ա. Սողոմոնյանի անվան թիվ 2 միջնակարգ, 8 միլիոն 452 հազար դրամ՝ Ճամբարակ համայնքի Այգուտ բնակավայրի միջնակարգ, 17 միլիոն 982 հազար դրամ՝ Սեւան համայնքի Զովաբեր բնակավայրի Ե. Չարենցի անվան միջնակարգ, 36 միլիոն 928 հազար դրամ՝ Սեւան քաղաքի Յա. Զարոբյանի անվան թիվ 2 հիմնական, 6 միլիոն 453 հազար դրամ՝ Ճամբարակ համայնքի Ծափաքաղ բնակավայրի Հ. Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոցներում կենտրոնացված ջեռուցման համակարգ անցկացնելու նպատակով:

ՀՀ կառավարության նույն որոշմամբ 3 միլիոն 609,5 հազար դրամ հատկացվել է Ճամբարակ համայնքի Շողակաթ բնակավայրի միջնակարգ եւ 1 միլիոն 380 հազար դրամ՝ Սեւան համայնքի Նորաշեն բնակավայրի հիմնական դպրոցներում կենտրոնացված ջեռուցման համակարգ անցկացնելու նպատակով գույք եւ անհրաժեշտ սարքավորումներ ձեռք բերելու համար:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ

ՇԱՏԻՎԱՆՔԸ

Պռոշաբերդից իջնում ենք դեպի Շատիվանք: Երկնամերձ բարձունքներից Շատիվանքը չի երեւում, քանի որ այն մեր տեսադաշտից քողարկված է ցածում գտնվող ժայռերի ու ձորերի մեջ: Իսկ Շատին գյուղի մի հատվածը հազիվ նշմարվում է մի բռի չափ: Դեպի Շատիվանք տանող ճանապարհներն այնքան թեք ու վտանգավոր են, որ ուղեւորներս որոշում ենք որոշակի ճանապարհ կտրել ոտքով, մինչեւ որ կհասնենք մեքենայի համար ավելի հարթ ու անվտանգ ճանապարհին: Իսկ Թաքուլը աներկյուղ վարում է մեքենան քարքարոտ, վայրընթաց ճանապարհներով, խորունկ անդունդների եզրերով: Սակայն, մինչեւիսկ ոտքով քայլելիս, մեզ վախ են պատճառում լեռնային այդ թեքությունները, մանավանդ որ առաջ ընթանալու համար մեր քայլերը փոխում ենք անչափ զգուշորեն, տեղ-տեղ՝ միմյանց ձեռքերը բռնած, որպեսզի ցած չգլորվենք: Այսպես անցնում ենք ավելի քան 1 կիլոմետր:

Մեր առջեւում փռված է Վայոց Ձորի հիասքանչ համայնապատկերը: Լեռների բարձրադիր փեշերում նկատվում են ավտոմեքենաների համար բացված ճանապարհներ, որոնք կամ բնակավայրեր են տանում, կամ արոտատեղեր ու դաշտեր: Իսկ խորունկ կիրճերի մեջ տեսնում ենք գյուղերը, արագահոս գետերի ջրերը: Մեր շուրջբոլորը մի անառիկ, վայրի լեռնաշխարհ է, կուսական չքնաղ բնություն՝ թաղված ծաղիկների բույլերի, գույնեռի ու բույրերի, քչքչան աղբյուրների, շառաչուն գետերի, լեռների ձյունապատ գագաթների, շքեղաշուք բնապատկերների մեջ:

Հայացքս հառում եմ դեպի հյուսիս, դեպի տասնյակ կիլոմետրերով ձգվող լեռնաշղթան, որն անառիկ, հզոր պարսպի պես պատնեշում է Վայոց Ձորը հյուսիսային կողմից: Դա Վարդենիսի լեռնաշղթան է, որից այն կողմ արդեն փռված է Գեղարքունյաց աշխարհը, որից այն կողմ էլ անթիվ ու անկրկնելի են բնության ու պատմության հուշարձանները, որից այն կողմ էլ հայկականության հզոր շունչն է իշխում, պամամշակութային նույն միջավայրը:

Ու այս ուխտագնացության կարեւոր դրվագներից մեկն այն եմ համարում, որ ինձ կյանքում առաջին անգամ բախտ է վիճակվում՝ մոտիկից տեսնելու Վարդենիսի լեռնաշթայի համայնապատկերը Վայոց Ձորի կողմից:

/շարունակությունը՝ էջ 4-ում/

10.qxd 23/05/2025 16:25 Page 2

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՎԱՐՏԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մայիսի 16-ին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը խորհրդակցություն անցկացրեց մարզի հանրակրթական դպրոցների տնօրենների եւ վարչատնտեսական համակարգողների հետ:

Խորհրդակցությունը նվիրված էր 2024-2025 ուստարվա ընթացքում կատարված աշխատանքներին, առաջիկա անելիքներին, «Վերջին զանգի» միջոցառումների կազմակերպման ու անցկացման կարգին:

2024-2025 թվականի ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքների մասին զեկուցումով հանդես եկավ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ԿՄՄ վարչության պետ Կարեն Ջազյանը՝ հանգամանալից ներկայացնելով կրթության, մշակույթի եւ սպորտի ոլորտում գրանցված հաջողություններն ու ձեռքբերումները, անցկացված բազմաբնույթ միջոցառումները, «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրով մարզում կառուցվող կամ հիմնանորոգվող դպրոցների ու մանկապարտեզների շինարարության ընթացքը, հրատապ ծրագրերով իրականացված աշխատանքները, մանկավարժների կամավոր ատեստավորման ու տարակարգի շնորհման արդյունքները:

Մարզպետ Կարեն Սարգսյանն անդրադարձավ «Վերջին զանգի» միջոցառման կազմակերպման ու անցկացման կարգին եւ մարզի հանրակրթության ոլորտի առաջիկա անելիքներին ու հրատապ խնդիրներին:

-Իմ հորդորն է ձեզ՝ սահմանել համարժեք հսկողություն, որպեսզի միջոցառումներն անցկացվեն միայն սահմանված կարգի համաձայն, շրջանավարտների կողմից թույլ չտրվի որեւէ անցանկալի արարք, տեղի չունենա որեւէ տհաճ միջադեպ, եւ իշխի միայն տոնական տրամադրություն:

Հաջորդ առաջնահերթ ու կարեւոր անելիքը վերաբերում է դպրոցաշինությանը: Դուք գիտեք, որ այժմ շինարարական աշխատանքներ ընթանում են մարզի երեք տասնյակից ավել դպրոցներում, որտեղ անհարժեշտ վերահսկողության կարիք կա: Այդ անհրաժեշտությունից ելնելով էլ համապատասխան դպրոցների տնօրենները պետք է տեղերում ամենօրյա հսկողություն սահմանեն ընթացքի մեջ գտնվող շինաշխատանքների նկատմամբ եւ ի հայտ եկած խնդիրների, բացթողումների մասին մասին անմիջապես տեղեկացնեն Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմին, որպեսզի կարողանանք ժամանակին միջամտել ու շտկել իրավիճակը,-հանձնարարեց Կարեն Սարգսյանը:

Օգտվելով առիթից՝ Կարեն Սարգսյանը արդյունավետ աշխատանքի ու հանրակրթության ոլորտում 2024-2025 ուստարվա ընթացքում գրանցված հաջողությունների համար շնորհակալություն հայտնեց մարզի հանրակրթական դպրոցների տնօրեններին ու վարչատնտեսական համակարգողներին՝ միաժամանակ նրանց միջոցով իր ջերմ շնորհավորանքները փոխանցելով շրջանավարտներին:

Խորհրդակցության ավարտին մարզպետը ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից շնորհված դիպլոմներ ու գովասանագրեր հանձնեց Գեղարքունիքի մարզից 2024-2025 թվականների ուստարվա առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլում հաղթած աշակերտներին, իսկ նրանց ուսուցիչներին լավագույն աշխատանքի համար պարգեւատրեց Գեղարքունիքի մարզպետի շնորհակալագրով:

«Գեղամա աշխարհ»

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ ԱՐԺԱՆԱՑԵԼ ԵՆ 5 ԴԻԼՈՄԻ ԵՎ 19 ԳՈՎԱՍԱՆԱԳՐԻ

Գեղարքունիքի մարզի դպրոցականները 2024-2025 թվականների ուստարվա առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլում արժանացել են 5 դիլոմի եւ 19 գովասանագրի:

Առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլին Գեղարքունիքի մարզից մասնակցել են մարզային փուլի արգելքը հաղթահարած 68 աշակերտ, որոնցից 24-ը վերադարձել են դիպլոմներով ու գովասանագրերով: «Հայ գրականություն» առարկայից երկրորդ կարգի դիպլոմի է արժանացել Գանձակի թիվ 2 միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ Ջուլիա Բարսեղյանը: Նույն առարկայից 3-րդ կարգի դիպլոմի է արժանացել Սեւան քաղաքի թիվ 1 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ Նարինե Կարապետյանը: «Աշխարհագրություն» եւ «Պատմություն» առարկաներից 3-րդ կարգի դիպլոմի են արժանացել Մարտունու ավագ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Հասմիկ Ալեքսանյանը, Սարուխանի թիվ 1 միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ Աբել Խաչատրյանը եւ Գեղհովիտի թիվ 2 միջնակարգ դպրոցի աշակերտ Մարի Ներսիսյանը:

«Նախնական զինվորական պատրաստություն» առարկայից գովասանագրի են արժանացել Ներքին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտներ Լենա Սարգսյանը եւ Դավիթ Սուքիասյանը, Ջոլաքարի թիվ 2 միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Մարի Ղզրոյանը, Դդմաշենի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտներ Արմեն Նազարյանը եւ Անգին Ալեքսանյանը:

«Գերմաներեն լեզու» առարկայից գովասանագրի է արժանացել Ներքին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ Վալերի Ավետիսյանը, «Պատմություն» առարկայից՝ Լիճքի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Արսեն Գասպարյանը:

«Հայոց լեզու» առարկայից գովասանագրի են արժանացել Ծովագյուղի միջնակարգ դպրոցի 9 եւ 10-րդ դասարանների աշակերտներ Մանե Մինասյանը եւ Ալվարդ Մովսիսյանը, Մարտունի քաղաքի ավագ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ Անահիտ Գասպարյանը, Նորատուսի թիվ 1 միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ Մոնիկա Սամվելյանը, Լիճքի միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ Էլեն Մարտիրոսյանը եւ Գավառի ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ Էմմա Մանուկյանը:

«Հայ գրականություն» առարկայից գովասանագրի են արժանացել Գանձակի թիվ 1 միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ Նոնա Հունանյանը, Վարդենիկի կրթահամալիրի 10-րդ դասարանի աշակերտ Լիլիա Հովհաննիսյանը, Ակունքի միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտներ Նարինե Գեւորգյանը եւ Ռոմելյա Ավագյանը:

«Ռուսաց լեզու» առարկայից գովասանագրի են արժանացել Գավառի թիվ 8 միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ Ռուբիկ Ասատրյանը եւ Գավառի թիվ 7 միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Անուշ Սիմոնյանը:

Առարկայական օլիմպիադայի ներդպրոցական փուլին Գեղարքունիքի մարզից մասնակցել են 7126, մարզային փուլին՝ 761 աշակերտ:

Համբարձում Սաֆարյան

ՍԵՎԱՆԱ ԼԻՃ Է ԲԱՑ ԹՈՂՆՎԵԼ ՍԵՎԱՆԻ ԻՇԽԱՆԻ «ԳԵՂԱՐՔՈՒՆԻ» ԵՆԹԱՏԵՍԱԿԻ 36 ՀԱԶԱՐ ՄԱՆՐԱԶՈՒԿ



Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Կարճաղբյուր գյուղի տարածքում գտնվող Սեւանի իշխանի մանրաձկան արտադրության գործարանում ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, «Սեւանի իշխանի պաշարների վերականգնման եւ ձկնաբուծության զարգացման» հիմնադրամի, ինչպես նաեւ Alltech Coppens ընկերության Alltech Coppens Aqua Centre գիտահետազոտական կենտրոնի համագործակցությամբ, կենսաբազմազանության միջազգային օրվան ընդառաջ, կազմակերպվել էր «Ձկնաբուծությունը Հայաստանում. 2025 թվականին» խորագրով աշխատաժողով:

Կարճաղբյուրի մանրաձկան արտադրության գործարանի տնօրեն Տիգրան Վարդանյանի տեղեկացմամբ՝ միջոցառումն ուղեկցվել է նաեւ Սեւանի իշխանի մանրաձկան՝ Սեւանա լճի էկոհամակարգ բացթողնման արարողությամբ. Սեւանա լճի էկոհամակարգ բաց է թողնվել Սեւանի իշխանի «Գեղարքունի» ենթատեսակի 23,8 գրամ կշռող շուրջ 36 000 մանրաձուկ:

Մանրաձկան բացթողնման գործընթացին մասնակցել են Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, մարզպետի խորհրդական Սեւակ Խլղաթյանը, ՀՀ շրջակա միջավայրի նախարարի կողմից ձեւավորված մանրաձկան բացթողնման գործընթացները համակարգող աշխատանքային խմբի անդամները, շահագրգիռ այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

«Գեղամա աշխարհ»

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՏԱՐՎԵԼ Է 8555, 4 ՀԵԿՏԱՐ ԳԱՐՆԱՆԱՑԱՆ

Գեղարքունիքի մարզի գյուղացիական տնտեսություններում 2025 թվականի մայիսի 19-ի դրությամբ կատարվել է 8555, 4 հեկտար գարնանացան

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության վարչությունից, 2071 հեկտար գարնանացան կատարվել է Գավառ, 2120,5 հեկտար՝ Մարտունի, 3558 հեկտար՝ Վարդենիս, 465 հեկտար՝ Սեւան, 340,9 հեկտար՝ Ճամբարակ համայնքներում:

Կատարվել է 4928 հեկտար գարու, 2228 հեկտար կարտոֆիլի, 437 հեկտար գարնանացան ցորենի, 242,2 հեկտար վարսակի, 45 հեկտար հաճարի, 120 հեկտար լոբու, 2 հեկտար ոսպի, 102 հեկտար ոլոռի, 19 հեկտար սիսեռի, 239 հեկտար կորնգանի, 64,2 հեկտար առվույտի, 3 հեկտար կտավատի ցանք, սածիլվել է 126 հեկտար բանջար:

10 հազար 294,1 հեկտար էլ զբաղեցնում են աշնանացան ցորենի արտերը, որոնք հաջող են ձմեռել ու կենսունակ են հետագա աճի ու զարգացման համար:

Գարնանացանը Գեղարքունիքում կշարունակվի մինչեւ հունիսի 10-ը:

«Գեղամա աշխարհ»

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՎԵՐՋԻՆ ՄԵԿ ԱՄՍՈՒՄ ԲԱՐՁՐԱՑԵԼ Է 21 ՍԱՆՏԻՄԵՏՐՈՎ

Սեւանա լճի մակարդակը 2025 թվականի ապրիլի 19-ից մինչ մայիսի 19-ն ընկած ժամանակահատվածում բարձրացել է 21 սանտիմետրով:

ՀՀ ՇՄՆ «Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ տեղեկագրի համաձայն՝ 2025 թվականի մայիսի 19-ի դրությամբ Սեւանա լիճը ծովի մակերեւույթից գտնվել է 1900 մետր 69 սանտիմետր բարձրության վրա, որը 21 սանտիմետրով բարձր է նախորդ տարվա նույն օրվա եւ այս տարվա ապրիլի 19-ին գրանցված նիշից:

2025 թվականի հունվարի սկզբից մինչ մայիսի 12-ն ընկած ժամանակահատվածում Արփա-Սեւան թունելային ջրատարով Սեւանա լիճ է տեղափոխվել 68 միլիոն 448 հազար խորանարդ մետր ջուր:

Սեւանա լիճ թափվող գետերում դիտվել է ջրի ելքերի մեծացում:

10.qxd 23/05/2025 16:25 Page 3

ԳԵՂՀՈՎԻՏ ԳՅՈՒՂՈՒՄ ԲԱՑՎԵԼ Է ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Մայիսյան եռատոների առթիվ Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ գյուղի մշակույթի կենտրոնում բացվել է «Ազգը՝ բանակ» խորագիրը կրող լուսանկարների ցուցահանդեսը:

Ինչպես տեղեկացրեց ցուցահանդեսի նախաձեռնող ու հեղինակ, լրագրող, ազատամարտիկ Զոհրաբ Ըռքոյանը, Հայոց բանակի օրվան նվիրված ցուցահանդեսը, որի լուսանկարները պատմում են 1989 թվականից մինչ ներկա օրերը Հայոց բանակի մասին, առաջին անգամ բացվել է 2025 թվականի փետրվարի սկզբին, «Թեքեյան մշակութային կենտրոն»-ում: Մարտի 5-ին՝ Սպարապետ վազգեն Սարգսյանի ծննդյան օրը, ցուցադրությունը շարունակվել է Արմավիրում գործող Տիգրան Մեծի անվան ռազմամարզական վարժարանում: Իսկ Գեղհովիտում ցուցահանդեսը կայացել է մշակույթի կենտրոնի աջակցությամբ:

-Գեղհովիտ գյուղը դարերի պատմություն ունի, այդ են վկայում տարածքում պահպանված կիկլոպյան ամրոցները, այլ հնադարյան հուշարձաններ: Մեծ Հայրենականում հարյուրավոր գեղհովիտցիներ մասնակից եղան: Նանցից կեսը տուն չվերադարձան: 1967 թվականից գյուղի կենտրոնում կանգուն է նույն նահատակներին նվիրված հուշակոթողը: Արցախյան գոյամարտում նույնպես շատ գեղհովիտցիներ մասնակից եղան: 1994 թ. մարտին Օմարի լեռնանցքը պաշտպանելիս նահատակվեցին Արսենն ու Հարությունը: Հետագա խաղաղ տարիներին Հայոց սահմանը պաշտպանելիս նահատակվեցին գյուղի տղաներից: 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սկսված պատերազմը դարձյալ շատ գեղհովիտցիների առաջնագիծ տարավ: Զոհվեցին ժամկետային 4 զինծառայող, կա անհայտ կորած: Մեծ հայրենականի նահատակներին նվիրված հուշակոթողի հարեւանությամբ է նորօրյա հերոսների անմահ հուշակոթողը: Իմ նպատակն է, որպեսզի հատկապես դպրոցականները, ուսանողներն ու երիտասարդները ծանոթանան Արցախյան գոյամարտի հերոսների մասին պատմող ցուցադրությանը: Եվ ուրախ էի, որ մայիսի 9-ի ցուցադրությանը շատ էին հատկապես դպրոցականները,-պատմում է Զոհրաբ Ըռքոյանը:

Ցուցահանդեսը բացվել է Գեղհովիտի մշակույթի կենտրոնի սաների երաժշտական կատարումներով ու ասմունքով: Մեծ հայրենականի ու Արցախյան գոյամարտի զոհերի հուշակոթողների մոտ ծաղիկներ խոնարհելուց հետո ներկաները հրավիրվել են ցուցասրահ, որտեղ կենտրոնում զինվորական տեսարան է, իսկ պատերին լուսանկարներն են:

-Երբ բառերը պակասում են, լուսանկարներն են սկսում խոսել... Այս ցուցահանդեսը լռությամբ կպատմի հայ զինվորի աննկուն կամքի ու հերոսական կերպարի մասին,- ասել է մշակույթի կենտրոնի աշխատակիցը:

Ցուցասրահի կարմիր ժապավենը կտրել է լուսանկարների հեղինակը՝ Զոհրաբ Ըռքոյանը՝ մշակույթի կենտրոնի՝ արդեն նախկին զինվորական աշխատակցի հետ: Ցուցադրված է մոտ 300 լուսանկար՝ արված 1989-2025 թվականներին:

-Արցախյան առաջին գոյամարտի մասին պատմող լուսանկարներում Շուշին է, Բերդաձորը, Քաշաթաղը, Ավետարանոցը, Ճարտարը, Ակնան, Վանքասարը եւ այլն, ազատամարտին մասնակցած բազմաթիվ կամավորականներ ու զինվորներ: 1996 թվականից բնակվելով Քաշաթաղի շրջկենտրոն Բերձորում՝ լուսանկարների հեղինակը տարբեր ժամանակներում, տարբեր պատճառներով այցելել է Արցախի ՊԲ զորամասեր, առաջնագիծ, որի ընթացքում էլ արվել են այդ օրերի լուսանկարները: 2014, 2015, 2016 թվականներին Քաշաթաղից շատ կամավորականներ են ժամկետային զինծառայողների հետ պաշտպանել Արցախի սահմանը: Շատ են այդ օրերի լուսանկարներ եւս. հեղինակը զենքին զուգահեռ նաեւ լուսանկարչական խցիկն է օգտագործել: 2020 թվականի պատերազմի օրերի մասին նույնպես պատմող լուսանկարներ կան: Առանձին մի պաստառ նվիրված է Գագիկ Գինոսյանին: 2020 թվականի պատերազմից հետո արված լուսանկարներն արդեն նոր ստեղծված ռազմամարզական ճամբարների, վարժարանների սաների մասին են պատմում,-ներկայացրել է Գեղհովիտի թիվ 1 միջնակարգ դպրոցի տնօրեն, Զոհրաբ Ըռքոյանի մարտական ընկեր Էդվարդ Ասլանյանը:

Ներկաները ծանոթացել են ցուցադրությանը, կարեւորել նման միջոցառումները՝ հիշողություն արթնացնող ու հավատ ներշնչող:

Ցուցադրությունը կշարունակվի մինչեւ մայիսի վերջը:

Խոսրով Խլղաթյան

ԴԴՄԱՇԵՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԲԱՑՎԵԼ Է ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆՈՒՄ ԶՈՀՎԱԾ ԵՎ ԱՆՀԵՏ ԿՈՐԱԾ 213 ԴԴՄԱՇԵՆՑԻՆԵՐԻ ԶՈՐՍ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐԸ

Մայիսի 9-ին՝ Հաղթանակի եւ խաղաղության օրը, Սեւան համայնքի Դդմաշեն գյուղի կենտրոնում գտնվող հերոսների հիշատակին նվիրված հուշախաչքարի եւ հուշարձանի տարածքում, հանդիսավորությամբ բացվել է Մեծ հայրենականում զոհված եւ անհետ կորած 213 դդմաշենցիների անունները հավերժացնող չորս հուշատախտակները:

Հուշատախտակների տեղադրման նախաձեռնության հեղինակը ծնունդով դդմաշենցի Արամ Ֆահրադի Սողոմոնյանն է:

Մեծ հայրենականում զոհված եւ անհետ կորած 213 դդմաշենցիների անունները հավերժացնող հուշատախտակների բացմանը ելույթով հանդես են եկել Դդմաշեն բնակավայրի վարչական ղեկավար Գարիկ Ներսիսյանը, հուշատախտակների նախաձեռնության հեղինակ Արամ Սողոմոնյանը, Սեւանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արմենուհի Ղուկասյանը, Դդմաշենի գրադարանի տնօրեն Ֆլորա Գրիգորյանը, ովքեր շնորհավորել են բոլորին՝ Հաղթանակի եւ խաղաղության օրվա եւ հուշատախտակների բացման առթիվ:

Արամ Սողոմոնյանն էլ իր հերթին շնորհակալություն է հայտնել բոլորին՝ օրվա միջոցառումներին մասնակցելու համար եւ այն բոլոր մարդկանց, ովքեր աջակցել են իրեն այս կարեւոր գործում՝ հանձինս Դդմաշենի բնակիչ Վիգեն Եղիազարյանի:

Արամ Սողոմոնյանը հայ գրող, հասարակական գործիչ, մանկավարժ, մատենագիր եւ բանահավաք, Երկրորդ համաշխարհային պատերազմի մասնակից, Դդմաշեն գյուղի պատմության եւ մշակույթին նվիրված գրքերի հեղինակ, Դդմաշենի պատվավոր քաղաքացի Ֆահրադ Սողոմոնյանի որդին է, ով իր հոր ցանկությունն այսօր իրականություն է դարձրել: Ֆահրադ Սողոմոնյանի նախաձեռնությամբ, իր կենդանության օրոք Դդմաշենի կենտրոնում տեղադրվել է զոհված ազատամարտիկների, իսկ Սուրբ Թադեւոս եկեղեցու բակում՝ 1937 եւ 1949 թվականներին անհիմն բռնադատված դդմաշենցիների հիշատակը հավերժացնող հուշարձաններ: Արամ Սողոմոնյանի եւ իր ընտանիքի նախաձեռնությամբ Դդմաշենի մուտքի մոտ տեղադրվել է նաեւ Դդմաշեն անունը կրող հուշարձանը:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին ռազմաճակատ են մեկնել 538 դդմաշենցիներ:

Դդմաշենից պատերազմին մասնակցել են մեկ մայոր, 4 կապիտան, 24 լեյտենանտ, 37 սերժանտ:

Արմինե Ղուկասյան

ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼ Է ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՐԻ ՓԱՌԱՏՈՆ

Գեղարքունիքի մարզի եւ ֆրանսիական Իզերի դեպարտամենտի միջեւ մշակութային գործակցությամբ Գավառ քաղաքում Պարի փառատոն է անցկացվում: 14 խումբ ներկայանում է ժամանակակից պարերով: Արդեն 6 տարի հայ պատանիների հետ աշխատում են ֆրանսիական Հալե էգայան պարախմբի մասնագետները: Համատեղ փորձում են ավանդական պարերին զուգահեռ զարգացնել նաեւ ժամանակակիցը:

Ինչպես տեղեկացրեց Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ԿՄՍ վարչության պետ Կարեն Զազյանը, համույթի պարուսույցների այցերը տարեկան երեք անգամ են, որոնց ընթացքում եռօրյա մաստեր կլաս են անցկացվում ավելի քան 30 երիտասարդների հետ: Ամեն տարի ծրագրի շրջանակներում շուրջ 100 երեխա եւ երիտասարդ մասնակցում են ժամանակակից պարի աշխատարանների:

-Հայ ընկերներիցս մեկին հարցրի՝ ի՞նչ է քեզ համար այս գործակցությունը, պատասխանեց՝ կարեւորն այն չէ, որ դու ֆրանսիացի ես, ես՝ հայ, կարեւորն այն է, որ երկուսս էլ պարող ենք: Պարի փառատոնը միջոց է համախմբվելու ոչ թե «Ես սիրում եմ հայերին... ես սիրում եմ ֆրանսիացիներին...» մակարդակում, այլեւ մշակութային երկխոսությամբ, գիտելիքներ փոխանակելով,- նշել է Լիոնի պարախմբի ղեկավար Բրունո Միեշոն

Ժամանակակից պարերի դասավանդման ծրագրում ընդգրկված են մարզի արվեստի դպրոցների պարախմբերը եւ ֆրանսերենի ուսուցման խմբակների սաները: Փառատոնին նրանց են միացել պարողներ նաեւ Սյունիքի մարզից: Պարախմբերից շատերը սիրողական են եւ ձեւավորվել են մշակութային նախաձեռնության շրջանակում: Միջոցառման մասնակիցները բացահայտում են ոչ միայն այլ ազգերի, այլեւ Հայաստանի տարբեր մարզերի պարի ավանդույթները:

Երկօրյա փառատոնի բոլոր մասնակիցները ստացել են հավաստագրեր, իսկ լավագույն երկու պարախմբի խրախուսել են Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմն ու Գավառի համայքնապետարանը:

ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՌԱԶՄԱՄԱՐԶԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԸ ԵՎ ՍԱՆԵՐԸ ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության աջակցությամբ Երեւանի Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանի պետ Ալեքսանդր Մանուչարյանը եւ Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների շրջանավարտներից նշված վարժարանում իրենց ուսումը շարունակող սաները մայիսի 12-13-ին այցելել են մարզի համայնքներ, որտեղ հանդիպումներ են ունեցել մարզային ենթակայության հանրակրթական դպրոցների 9-րդ դասարաններում սովորող աշակերտների, նրանց ծնողների, ՆԶՊ առարկան դասավանդող ուսուցիչների հետ:

Մասնագիտական կողմնորոշման նպատակով վարժարանի պետը հանդիպման մասնակիցներին ներկայացրել է վարժարանի ընդունելության կարգը, գործող պայմանները, վարժարանի եւ զինվորական մասնագիտության առավելությունները, կրթական առաջնահերթությունները:

Իրենց հերթին վարժարանի սաները ներկայացրել են իրենց փորձը, խոսել վարժարանի հագեցած առօրյայի մասին, կիսվել իրենց տպավորություններով եւ կարծիքներով:

Հասմիկ Շահբազյան

10.qxd 23/05/2025 16:25 Page 4

ՇԱՏԻՎԱՆՔԸ

/սկիզբը՝ էջ 1-ում/

Ու լեռնաշղթայի այս կողմն էլ պակաս հմայիչ չէ, քան թե նրա հակառակ կողմն է Գեղամա աշխարհում. գրեթե նույն ձյունագես ու դեպի երկինք մխրճվող լեռնագագաթներն են, գագաթներից մինչ կիրճերի հատակը իջնող ձորակները, ռելիեֆային յուրահատուկ կտրվածքներն ու իջվածքները, բարձունքներից սրընթաց իջնող ջրերի շառաչները: Այսպես կարելի է քայլել մի ամբողջ հավերժություն ու երբեք չհոգնել, աչք չկտրել այս հրաշք բնությունից, հոգեպարար պատկերներից: Այսպես ավելի սիրելի, ավելի քնքուշ ու վայրենի է դառնում մեր հայրենիքը, հազարամյակների մեր բնօրրանը:

Ուզում ենք մինչ Շատիվանք քայլարշավով հասնել, սակայն Թաթուլը, ավելի հարթ տեղ գտնելով մեքենայի համար, մեզ առաջարկում է ճանապարհը մեքենայով շարունակել՝ ժամանակ շահելու նպատակով, որպեսզի օրվա ընթացքում կարողանանք պատմամշակութային այլ հուշարձաններ էլ այցելել:

Մեքենան շարունակում է դժվարին նոր վայրէջքներ հաղթահարել, մինչեւ որ մեր առջեւ իր ցնցող վեհությամբ հայտնվում է Շատիվանքը: Այն, թեկուզ կիսով չափ խոնարհված, իր երեւելի տեսքով բազմած է հեռավոր, բնակավայրերից կտրված մի ձորի մեջ, Եղեգիս գետի ձախափնյա լեռնալանջին: Առաջին իսկ դիտարկումից թվում է, թե մենք ավելի շուտ գործ ունենք բերդ-ամրոցի, քան թե վանքի հետ, քանի որ այն բոլոր կողմերից շրջապատված է բավականին մեծ ու անառիկ պարիսպներով , որոնց շուրջ պտտվելն անգամ ժամանակատար է: Իսկ պարիսպներից ներս արդեն ուշադրության է արժանի հսկայածավալ շինության ամեն մի անկյունը, մուտքերը, արձանագիր պատերը, խաչքար-տապանաքարերը, աշտարակները, գաղտնուղիները, խորանը, կամարակապ սյուները, քանդակներն ու խոյակները:



Պարզ է, որ մի քանի ժամը բավարար չէ՝ տեսածդ ի մի բերելու, վերլուծելու, համակարգելու, հուշարձանի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար, որ այդքան հեշտ չէ՝ առանց ափսոսանքի բաժանվելու հոգեւոր հրաշքների այս աշխարհից: Ու սկսվում է հետաքրքրության գրավիչ դասը՝ հուշարձանի մասին առկա պատմական աղբյուրների ուսումնասիրության շուրջ:

Շատիվանքը գտնվում է Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Շատին գյուղից մոտ 4 կիլոմետր արեւելք, Եղեգիսի ձախ ափին բարձրացող լեռան լանջին: Ստեփանոս Օրբելյանի «Պատմություն Սիսական աշխարհի» գրքի վկայությամբ՝ Շատիվանքը 929 թվականին հիմնադրել է Սյունյաց Տեր Հակոբ եպիսկոպոսը՝ Սմբատ իշխանի, նրա կին Սոփիայի ու եղբայր Սահակի աջակցությամբ: Այստեղ նա կանգնեցնում է եկեղեցի՝ տաշած վեմերով, զարդարում զանազան երանգներով գեղեցիկ նկարներով:

Ըստ պատմիչի՝ վանքը եղել է «խստակրոն, մեծահռչակ մշտնջենավորանոց»: Շատինում պահպանվել են 10–14-րդ դարերում բազմաթիվ խաչքարեր, վիմագիր արձանագրություններ եւ դրանց բեկորներ: 14-րդ դարից հետո վանքը անկում է ապրել. հավանաբար ավերվել է, որովհետեւ 17-րդ դարի կեսին նույն տեղում փաստորեն նոր վանք են կառուցել:

Ներկայիս եկեղեցին՝ երկու զույգ Т-աձեւ մույթերով, կիսաշրջանաձեւ խորանի երկու կողմերում ուղղանկյուն ավանդատներով, երկթեք տանիքով եռանավ բազիլիկը, կառուցվել է սրբատաշ բազալտ քարերով, 1655 թվականին եւ կոչվել Սուրբ Սիոն: Կառուցման հովանավորը նշանավոր վաճառական Հակոբ Ջուղայեցին է, ում անունով մարմարե խաչքար է ագուցված Սուրբ Սիոն եկեղեցու արեւմտյան դռան վերեւում: Հակոբ Ջուղայեցին, թողնելով աշխարհիկ կյանքը, դարձել է Շատին վանքի միաբան՝ իր միջոցները ի նպաստ դնելով կրոնական կենտրոնի ընդարձակման եւ բարգավաճման գործին: 17-րդ դարի 2-րդ կեսին վանքի միաբանությունը որոշել է այն վերահաստատել որպես անապատ: Վերափոխումից հետո Շատին վանքը կոչվել է Շատիկ անապատ ու հետագայում հիշատակվում է այս երկու անուններով:

Վանքի մոտավորապես ուղղանկյուն հատակագծով, հարավից երեք կիսաշրջանաձեւ բուրգերով ուժեղացված պարիսպները, դրանց կից բնակելի սենյակները, այժմ քանդված վիճակում գտնվող սեղանատունը կառուցել է Մովսես վարդապետը 1655–1668 թվականներին, իսկ պարիսպներից դուրս գտնվող գոմը եւ ախոռը՝ Անտոն վարդապետը՝ 1749 թվականին:

Շատին վանքը եղել է ուշ միջնադարի Սյունիքի կրոնական եւ մշակութային խոշոր կենտրոններից, ունեցել 90 միաբան: Նրա տնտեսական հզորության վկայությունն են արտադրականնշանակության ձիթհանն ու ջրաղացը եւ մեծաքանակ օժանդակ շինությունները, ջրանցքը եւ կամուրջը: Վանքի բարգավաճմանը նպաստել են նրա հարմար աշխարհագրական դիրքը՝ Նախիջեւանը եւ Սյունիքը Սեւանի ավազանին կապող ճանապարհի վրա տեղադրված լինելը, եւ սերտ կապերը Ջուղայի ու Գողթն գավառի հետ:

Շատիվանքը եղել է նաեւ նշանավոր գրչության կենտրոն, եւ այդ գործում մեծ ավանդ ունի Հակոբ Ջուղայեցին, ում գրչին է պատկանում ձեռագրերի մի մասը: Շատիվանքի մշակութային եւ տնտեսական ծաղկման գործում Հակոբ Ջուղայեցու ունեցած մեծ վաստակի աննախադեպ գնահատականն է դեռ կենդանության օրոք՝ 1661 թվականին նրա պատվին կանգնեցված խաչքարը:

Երբ ավարտել էինք Շատիվանքի դիտարկումները դրսից ու ներսից եւ պատրաստվում էինք դուրս գալ պարսպի դռնից, խորովածի պատրաստություն տեսնող Թաթուլը մեզ կանգնեցրեց ուղիղ մուտքի մոտ ու հարցրեց.

-Դուք տեսա՞ք գաղտնուղին ու նրանում գտնվող կառույցները:

-Այո,-ասացինք, աշտարակի ներսում էր, ստորգետնյա ուղի էր ձգվում:

-Այդպես էլ գիտեի, որ առավել զարմանահրաշ գաղտնիքը չեք տեսել, դրա համար էլ խորովածի գործը թողեցի, եկա, քանի որ անծանոթ աչքով այն անհնար է գտնել, եթե հուշող չլինի:

Ապա Թաթուլը մեզ առաջնորդում է դեպի վանքի խորանից հարավ, պատի մեջ բացվող մուտքով, որից մի քանի քայլ այն կողմ արդեն բոլորս ապշած ենք մնում մեր տեսածից: Փաստորեն, վանքի հարավային պատին կից մի ողջ քարավանատուն է թաքնված՝ իր բազմաթիվ քարակերտ, կամարակապ սրահներով: Ու այդ քարավանատունը եղել է վանքին եկամուտ բերող շոշափելի միջոց: Բնական է, որ այստեղ հանգրվանել են այլ երկրներից ու Հայաստանի տարբեր բնակավայրերից ճամփորդելու ելած մարդիկ:

Շատիվանքն իր մեջ պարունակում է հայ ժողովրդի ստեղծագործ մտքի եւ ձգտումների ուժը, ապրելու, մաքառելու, հոգեւոր-մշակութային արժեքներ կերտելու կամքը: Սա մեր ժողովրդի ձեռքերով կերտված հենց այն բացառիկ կոթողներից մեկն է, որի պատերից ներս կամ դուրս մարդն իրեն զգում է ավելի վեհացած, ավելի թեթեւացած կյանքի զանազան հոգսերից ու հաստատակամ ասում.

-Մեկ անգամ եւս հպարտ եմ՝ կյանքում հայ ծնվելու համար:

Հոգեւոր հզոր լիցք ստացած ուխտավորներս Շատիվանքից շարժվում ենք դեպի Եղեգիս գյուղի Սուրբ Ջորաց տաճար:

Խոսրով Խլղաթյան

ՀԱՅՐԱՎԱՆՔԸ ՆԱԵՎ ՀԻՆ ՈՒ ՀԶՈՐ ԲԵՐԴԱՔԱՂԱՔ Է

Հայրավանքը Գեղամա աշխարհի պատմաճարտարապետական հրաշալիքներից է, որի Արեւելյան կողմից բացվում է Սեւանա լճի եւ նրան շրջապատող լեռնաշղթաների հիասքանչ համայնապատկերը:

Սակայն Հայրավանքի մուտքի ձախ կողմում, դեպի հյուսիս, տարածվում է մի ընդարձակ հնավայր, որտեղ նշմարվում են հնագիտական հզոր արժեքներ, որտեղ տեսնելու, ուսումնասիրելու, ճանաչելու, հիանալու շատ բան կա պահպանված:

Առաջին հերթին նկատելի են կիկլոպյան դարաշրջանի պատերի շարվածքները, երկրորդ հերթին՝ բազմաթիվ սենյակները, ճանապարհները, գետնուղիներն ու գաղտնուղիները, պարիսպները:

Դժվար չի եզրակացնել, որ մենք գործ ունենք մի հսկա բերդաքաղաքի հետ, որը տարածվում է Սեւանա լճի ափով դեպի հյուսիս ու արեւմուտք: Միայն դժվար է հասկանալ, թե այդ շրջանակի սահմանները որտեղ են վերջանում, քանի որ հյուսիսում դրանք հատվում են նշանավոր Բերդկունքին, իսկ արեւմուտքում ու հարավում՝ Ազատ քաղաքի ավերակներին: Արդյո՞ք Հայրավանքի այս բերդաքաղաքը մաս է կազմել Բերդկունքին ու Ազատին, թե եղել է առանձին կառույց, դժվար է ասել:

Այդուհանդերձ, սա մեր ժողովրդի պատմության էջերը հարստացնող ու փառավորող մի այնպիսի հնավայր է, որն անզեն աչքով անգամ պատկերացում է տալիս Հայաստան երկրի, հայ ժողովրդի անցած պատմամշակութային տեւական երթի մասին, որ չափվում է մի քանի հազարամյակներով, քարե դարից մինչ մեր օրերը:

Ուստի կխնդրեի Հայրավանք այցելող ուխտագնացներին ու զբոսաշրջիկներին՝ անհրաժեշտ ժամանակ գտնել ու քայլել նաեւ վանքին մերձակա հնավայրի տարածքով, որտեղ դուք պատմահնագիտական բազմաթիվ արժեքների հետ հաղորդակցվելու երջանիկ պահ կունենաք:

Խոսրով Խլղաթյան

10.qxd 23/05/2025 16:25 Page 5

ԶՈՐԱՑ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Մեքենան սլանում է Եղեգիսի կիրճով, արդեն հարթ ու ասֆալտապատ ճանապարհով: Եղեգիս գետն արդեն գնում է իր վարար հունով, պղտոր ջրերի հոսքով: Աջուձախ կողմերում բարձրանում են հսկայական լեռնազանգվածներն ու երկնքին հպված լեռնագագաթները: Ծառերն արդեն ծաղկաթափ են լինում, կանաչը բարձրացել է թզաչափից ավելի: Մենք, այո՛, գնում ենք մի հեքիաթային ձորի միջով, ուր մեկտեղված են բնության բոլոր շռայլությունները՝ իրենց գույների, բույրերի, տեսքի, շարժումների, խորհրդավոր լռության, անսպառ ժամանակի ու անսահման երեւակայության մեջ: Սա մի հեքիաթ է, որն արձագանքում է ունկերիդ ու հոգուդ ներսում ու միաժամանակ իր ողջ հմայքով փայլատակում աչքերիդ առջեւ:

Մտնում ենք Եղեգիս գյուղ: Այն փռված է Եղեգիս գետի ձախ ափի սարալանջին, ծովի մակարդակից 1640 մետր բարձրության վրա: Գյուղի մուտքի մոտ մեր առջեւ բացվում է Սուրբ Կարապետ եկեղեցու համայնապատկերը: Այն համարվում է 13-րդ դարի կառույց, ունի ուրույն ու հետաքրքիր ճարտարապետական տեսք: Մենք կանգառ չենք կատարում այս հուշարձանի մոտ, քանի որ, Թաթուլ Տոնոյանի ներկայացմամբ, եկեղեցին այժմ գտնվում է վթարային վիճակում, ու հանկարծակի վտանգից խուսափելու եւ այլ կարեւոր հուշարձաններ այցելելու նպատակով ժամանակ շահելու համար շարունակում ենք մեր ընթացքը:

Եղեգիսը Հայաստանի ամենահին գյուղերից է, որի պատմությունը սկզիբ է առնում դեռեւս անտիկ, հելլենիստական դարաշրջանից, երբ այս բնակավայրին տրվել է էլեգիա անվանումը: Միջնադարյան Եղեգիսը Հայաստանի ամենահարուստ համայնքներից է եղել: 13-14-րդ դարերում այն եղել է իշխանանիստ ավան՝ Օրբելյանների իշխանական տոհմի նստավայրը: XV դարում Լենկ Թեմուրի եւ այլ զավթողական արշավանքներից, այնուհետեւ երկրաշարժի հետեւանքով ավերվել է քաղաքը:

1988 թվականին Սումգայիթյան դեպքերից հետո գյուղը վերաբնակեցվել է Ադրբեջանից բռնագաղթված հայ ընտանիքներով: Ըստ Հայաստանի 2011 թվականի մարդահամարի արդյունքների՝ Եղեգիսի մշտական բնակչությունը կազմել է 369, առկա բնակչությունը՝ 346 մարդ:

Եղեգիսի արեւելյան եզրին էլ մեր առջեւ բացվում է Զորաց Սուրբ Աստվածածին եկեղեցու համայնապատկերը: Մեր այցելության պահին հուշարձանի վրա ընթանում էին վերականգնման աշխատանքներ, որոնք իրականացվում են պետական միջոցներով: Ըստ արեւելյան պատի շինության արձանագրության՝ Զորաց եկեղեցին կառուցել է Սյունյաց Ստեփանոս Տարսայիճ եպիսկոպոսը՝ 14-րդ դարի 20-ական թվականներին: Տեղեկանում ենք, որ եկեղեցին ունի հայկական ճարտարապետության մեջ եզակի հորինվածք: Այն բաղկացած է միայն խորանից եւ երկու ավանդատնից: Աղոթասրահին փոխարինում է եկեղեցու առջեւի պարսպապատ հրապարակը: Ենթադրվում է, որ եկեղեցին ծառայել է պատերազմ մեկնող զորքերի համար. հայկական եկեղեցու կանոնների համաձայն, ժամասացություն թույլատրվում է միայն անշարժ պատարագամատույց սեղանի առկայությամբ:

Զորաց Սուրբ Աստվածածին եկեղեցու շուրջը 14-րդ դարի տապանաքարեր են: 1977 թվականին նորոգվել է եկեղեցու արեւմտյան ճակատը:

Ուսումնասիրողները կարծում են, որ այն զինվորական եկեղեցի է եղել: Այն առանձնանում է յուրահատուկ կառուցվածքով, քանի որ խորանի բարձրությունը հավասար է ձիու վրա նստած մարդու բարձրությանը: Մարտի մեկնելուց առաջ զինվորներն այստեղ երդում են տվել եւ օրհնություն ստացել, որից էլ եկեղեցին ստացել է իր Զորաց անունը:

Եկեղեցին համարվում է բաց խորան, եռակամար է՝ երկու սյուներով, երկու կից ավանդատներով, դրսից ուղղանկյուն հորինվածքով: Երեք մասի բաժանված միակ արեւելյան բեմով եկեղեցին է:

Եկեղեցին ամբողջովին պարսպապատ է կիկլոպյան քարերով, գլխավոր մուտքը արեւելյան կողմից է: Պարսպի միայն դարպասի վերեւի քարն է սրբտաշ:

Ծածկասալերի ստորին եզրերը զարդանախշվել են, որի վերին մասում էլ արձանագրություններ կան: Արձանագրություններ կան նաեւ խորշերում, որոնք հիմնականում Ստեփանոս Օրբելյանի տոհմածառին են նվիրված: Տարածքում կան 9-10-րդ դարերի խաչքարեր:

Առաջին իսկ հայացքից, այսքանը տեսնելուց ու ուսումնասիրելուց հետո, գալիս եմ այն համոզման, որ հավատի այս տունը գործել է անհիշելի, վաղնջական, հեթանոս ժամանակներից ու փոխանցվել սերնդեսերունդ: Այստեղ երդվել, կռվելու եւ թշնամուն հաղթելու, հայրենի հողը պաշտպանելու ուխտ են արել հայ իշխաններն ու զինվորները՝ պաշտելով ուժի, քաջության, հայրենանվիրության գաղափարը:

2006-2007 թվականներին Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային ակադեմիայի հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի միջին դարերի հնագիտության բաժնի վարիչ Հուսիկ Մելքոնյանի ղեկավարած արշավախումբը մասնակի պեղումներ է իրականացրել հուշարձանի տարածքում: Պեղումներով բացվել են հյուսիս-հարավ առանցքով իրար հաղորդակից երեք սենյակներ, որոնց պատերը շարված են երկշար, բազալտի զանգվածեղ քարերով: Ուշագրավ է շինության արեւելյան եւ հարավային պատերում զետեղված մեկական խորշերի մեջ տեղադրված պահարանները:

«Նորաբաց սենյակներում առկա բազմաթիվ դարակների ու պահարանների գոյությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ մենք գործ ունենք միջնադարյան գրչության վայրի եւ գրապահոց Մատենադարանի հետ»,-վկայել է հնագիտական արշավախմբի ղեկավարը:

Զորաց եկեղեցին այսօր գտնվում է կանգուն վիճակում: Եկեղեցին մի անգամ վերանորոգվել է միջնադարում, վերանորոգվել են բեմական մասը, քիվերը, ծածկասալերը: Հետագայում երկրորդ անգամ վերանորոգվել է 1970-ական թվականներին:

2024 թվականին սկսվել են եկեղեցու վերականգնողական, բարեկարգման աշխատանքներ:

1987 թվականին Զորաց եկեղեցու տարածքում նկարահանվել է «Ճանապարհ դեպի Սասունցի Դավիթ» գեղարվեստական ֆիլմի Դավթի եւ Մսրա Մելքիքի կռվի տեսարանը:

Զորաց եկեղեցու հարավային կողմում հեքիաթային անհաղթելի հսկայի նման վեր է խոյանում հսկայական լեռնազանգվածը: Տեւական դարերի ընթացքում անձրեւի կամ ձնհալի ջրերը ճեղքել են այս հսկայի ժայռերեղեն, ամրակուռ կուրծքը, առաջացրել թեք խանդակներ ու ձորակներ, սակայն լեռն անսասան կանգնած է իր տեղում՝ պահապան աջը Սուրբ Զորաց տաճարի գլխին դրած: Իսկ ձնհալի ջրերը սրընթաց իջնում են իրենց ծանոթ ճանապարհներով, նույն ահարկու գոչյուններով: Եկեղեցու պարսպի քարին նստած՝ հայացքով չափում եմ շուրջբոլորս՝ այդպես վայելելու հոգեպարար այդ երեկոն, որ թվում է մի ողջ հավերժություն, սակայն որպեսզի անց պետք է թաղվի վերահաս մթության մեջ իրենից թողնելով միայն պայծառ հիշողությունը:

-Արագացրեք, քանի դեռ մութը չի ընկել, մեզ սթափեցնում է Թաթուլի ձայնը,- այնպես անենք, որ գոնե լույսով հասցնենք տեսնել մեկ այլ հրաշք՝ Արատեսի վանքը:

Խոսրով Խլղաթյան

ԳԱՎԱՌԻ ԹԻՎ 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏԸ ԵՐԿՈՒ ՈՍԿԵ ՄԵԴԱԼ Է ՆՎԱՃԵԼ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ԱՇԽԱՐՀԻ ԳԱՎԱԹԻ ԽԱՂԱՐԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Պապին Ղանդիլյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ, Հայաստանի Հանրապետության ծանրամարտի հավաքականի ծանրորդ , Գավառի մարզադպրոցի սան Արտյոմ Մուխսյանը նվաճել է երկու ոսկե մեդալ Վրաստանի Հանրապետության Հավլաբար քաղաքում 2025 թվականի մայիսի 8-ից 12-ին կայացած Աշխարհի գավաթի խաղարկության մրցումներում:

Ինչպես տեղեկացրեց Գավառի Պապին Ղանդիլյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցի տնօրեն Ալիտա Գասպարյանը, Արտյոմ Մուխսյանը պատանիների մինչեւ 72 կգ քաշային կարգում Աշխարհի գավաթի խաղարկության 2-րդ օրը նվաճել է երկու ոսկե մեդալ: Նա երեք մոտեցումներն էլ անթերի է կատարել եւ գրանցել է լավագույն արդյունքները՝ 185 կգ բարձրացրած քաշերի հանրագումարով:

-Արտյոմ Մուխսյանին ժյուրին երկրորդ ոսկե մեդալով պարգեւատրել է՝ բոլոր երեք մոտեցումներն անթերի կատարելու համար՝ «պառկած սեղմում» մարզաձեւում: Առանձնապես ուզում ենք շնորհավորել ու մեր երախտագիտությունը հայտնել նաեւ մեր դպրոցի նախկին սան, Արտյոմ Մուխսյանի մարզիչ Ժորա Հովհաննիսյանին, ում ջանքերի շնորհիվ մեր դպրոցն ունեցավ այսպիսի կարեւոր նվաճում: Մենք ցնծությամբ ենք ընդունել մեր չեմպիոնին ու անչափ ոգեւորված ենք նման ձեռքբերումից,- նշեց դպրոցի տնօրենը:

«Գեղամա աշխարհ»

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԼՂՀ-ԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ

Գեղարքունիքի մարզի տարբեր բնակավայրերում ԼՂՀ-ից բռնի տեղահանված մեր հայրենակիցներին մտահոգող խնդիրների մասին հերթական անգամ իրազեկվելու եւ դրանց լուծմանն ընթացք տալու նպատակով Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի հանձնարարությամբ մարզպետի աշխատակազմի առողջապահության եւ սոցիալական ոլորտի, տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման հարցերի վարչությունների պետերը, մարզի համայնքապետարանների, միասնական սոցիալական ծառայության տարածքային ստորաբաժանումների, ՀՀ ՆԳՆ անձնագրային բաժինների պատասխանատուների հետ համագործակցված հանդիպումներ են ունեցել Լեռնային Ղարաբաղից Գեղարքունիքի մարզում վերաբնակություն հաստատատած ընտանիքների ներկայացուցիչների հետ:

Հանդիպումները վարել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Ջանիկ Բազեյանը, որոնց ընթացքում բանախոսները լսել եւ պատասխանել են մեր հայրենակիցների կողմից բարձրացված հարցերին, որոնք հիմնականում առնչվել են բնակարանային, սոցիալ-տնտեսական, առողջապահական, անձնագրային եւ այլ բնույթի թեմաներին:

10.qxd 23/05/2025 16:25 Page 6

ԳԵՂԱՄԱՎԱՆՑԻՆԵՐԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

1941թ. հունիսի 22-ի վաղ առավոտյան ՍՍՀՄ-ի վրա Գերմանիայի հարձակումով սկսվեց Հայրենական մեծ պատերազմը: Հունիսի 23-ի առավոտյան հանրապետություններին եւ շրջաններին հաղորդվեց ՍՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագիրը 1905-1918 թվականներին ծնված քաղաքացիների համընդհանուր զորահավաքի մասին: Սկսվեց մասսայական զորահավաքը: ՀՍՍՀ Ախտայի շրջանի Շահրիզ (1946թ. ապրիլի 26-ից՝ Գեղամավան) գյուղից խորհրդային գործող բանակում գտնվող եւ զորակոչի արդյունքում խորհրդա - գերմանական ռազմաճակատում հայտնվեցին 329 գեղամավանցիներ՝ ավելի, քան հարեւան Զովաբեր, Դմաշեն, Ծաղկունք գյուղերը միասին վերցրած: Նրանցից 164-ը չվերադարձան: Գեղամավանցիները մարտնչեցին խորհրդա - գերմանական բոլոր ռազմաճակատներում, բոլոր զորատեսակներում՝ Մերձբալթիկայում, Բելառուսիայում, Մոսկվայի մատույցներում, Լենինգրադում, Ղրիմում, Ստալինգրադում, Հյուսիսային Կովկասում, Կուրսկի ճակատամարտում՝ հասնելով մինչեւ Բուդապեշտ եւ Պրագա, Վարշավա եւ Բեռլին՝ արժանանալով բարձրագույն պարգեւների:

Խորհրդային պետության բարձրագույն պարգեւի՝ «Լենինի շքանշանի» արժանացել է Լեւոն Հայրապետի Գրիգորյանը: Վերջինս մասնակցել է 1939-1940թթ. խորհրդա-ֆիննական պատերազմին: Վերադառնալով՝ նորից զորակոչվել է Մեծ հայրենական եւ ծառայել է 12-րդ բանակի 11-րդ զրահագնացի 2-րդ դիվիզոնի մարտկոցում եւ մարտական գործողությունների արդյունքում շրջափակումից դուրս է բերել զրահագնացքը՝ գործի գցելով հրանոթը, բազմաթիվ կորուստներ պատճառելով թշնամուն: Հաշվի առնելով Լեւոն Գրիգորյանի սխրանքը՝ Հարավային ռազմաճակատի հրամանատարությունը նրան ներկայացրել է պարգեւատրման «Լենինի շքանշանի», որը հաստատվել է ՍՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության կողմից: Լեւոն Գրիգորյանը զոհվել է 1943 թ. հունիսի 13-ին, Կրասնոդարի երկրամասի Միսխակո բարձունքը գրոհելիս:

Պատերազմի առաջին իսկ օրերից ռազմական գործողությունների կիզակետում էր գտնվում Մեխակ Ապերի Ոսկանյանը (զորակոչվել էր 1940թ. հունիսին): Վերջինս Թամանյան 255-րդ ծովային հրաձգային բրիգադի կազմում մարտնչել է Ղրիմում, Տուապսեում, Մալայա Զեմլյայում, ապա՝ Նովոռոսիյսկում: Ավագ սերժանտ Մեխակ Ոսկանյանը 1942-1943թթ. երեք անգամ ծանր վիրավորում է ստացել, սակայն շարունակել է մարտական ուղին: Կերչի նեղուցի գրավման ժամանակ, լինելով հետախուզական դասակի հրամանատար, Մ. Ոսկանյանը կարողանում է թափանցել թշնամու խրամատը, ոչնչացնում է հակատանկային գնդացիրը, հինգ գերմանական զինվորի եւ երկուսին գերեվարելով՝ հասցնում շտաբ: Այս խիզախ գործողության համար Պրիմորսկի բանակի հրամանատար բանակի գեներալ Ի. Պետրովի միջնորդությամբ, դասակի հրամանատար Մեխակ Ոսկանյանն արժանանում է բարձրագույն՝ Կարմիր աստղի շքանշանի: Վերջինս, մինչ այդ դեսանտի կազմում մասնակցել էր նաեւ Նովոռոսիյսկ քաղաքի ազատագրմանը, որի համար հետագայում՝ 1985թ., պարգեւատրվել է «Հայրենական մեծ պատերազմի առաջին աստիճանի» շքանշանով, եւ նրա մարտական նկարը զետեղված է ՍՍՀՄ մարշալ Ա. Գրեչկոյի հանրահայտ «Ճակատամարտ Կովկասի համար» գրքում: Մ. Ոսկանյանը պարգեւատրվել է նաեւ «Կովկասի պաշտպանության համար» մեդալով եւ 1944թ. Ղրիմի ազատագրության ժամանակ չորրորդ անգամ ծանր վիրավորում է ստանում եւ զորացրվում, իսկ 2006թ. ՀՀ ՊՆ-ի կողմից արժանացել է «Մարշալ Բաղրամյան» մեդալի:

Գեղամավանցի Արեւշատ Սահակի Մաթեւոսյանը մասնակցել է համաշխարհային հռչակ ստացած Ստալինգրադի ճակատամարտին (1942թ. հուլիս-1943թ. փետրվար) 62-րդ բանակի 138-րդ հրաձգային դիվիզիայի կազմում:

Դիվիզիայի ստորաբաժանումները 1942թ. հոկտեմբերի 15-ից մինչեւ նոյեմբերի 23-ը Ստալինգրադի տրակտորի գործարանի մոտ հայտնվել էին գերմանական շրջափակման մեջ՝ հերոսաբար պաշտպանելով քաղաքի վերջին հողակտորը, ինչը հնարավորություն տվեց Կարմիր բանակին՝ ձեռնարկելու «Ուրան» ծածկանունով հակահարձակումը, որի արդյունքում շրջափակման մեջ հայտնվեց գեներալ-ֆելդմարշալ Ֆ. Պաուլյուսի 330-հազարանոց Բ բանակախմբի 6-րդ բանակը: Ստալինգրադի ճակատամարտի վերջին՝ ավարտական փուլում, երբ գերմանական բանակի կապիտուլացիան օրերի խնդիր էր, Արեւշատ Մաթեւոսյանն արկի բեկորից ծանր վիրավորում է ստանում՝ իր մահկանացուն կնքելով 1943թ. փետրվարին, քաղաքի դաշտային հոսպիտալներից մեկում: Նրա անունը խորհրդային մյուս հերոսների անվան հետ գրված է Ստալինգրադի Մամաեւ Կուրգանի «Փառքի սրահում»:

Վորոշիլովգրադ (այժմ՝ Լուգանսկ) քաղաքի ազատագրմանը մասնակցել է գվարդիայի սերժանտ Աշոտ Ավագյանը, որը պարգեւատրվել է «Փառքի 2-րդ եւ 3-րդ աստիճանի» շքանշաններով, որը շարքային կազմի ամենաբարձր պարգեւատրումներից մեկն էր, եւ հանրապետությունում երեք աստիճանի «Փառքի շքանշանի» արժանացել է ընդամենը 28 հոգի:

Շարքային Պարգեւ Կարապետի Մանուկյանը ծառայել է Հարավային ռազմաճակատի 28-րդ բանակի կազմում եւ 1943թ. փետրվարին մասնակցել Դոնի Ռոստովի ազատագրմանը: Տրոիցկոյե գյուղի մոտ նրա գլխավորված խումբը ընկավ շրջապատման մեջ՝ պաշտպանելով գյուղը: Մարտնչելով թշնամու գերակշիռ ուժերի դեմ՝ Պարգեւ Մանուկյանը զոհվում է: Այտեղ էլ ամփոփված է նրա աճյունը:

Լենինգրադի՝ 872 օր տեւող պաշտպանությանը (բլոկադային) նույն ռազմաճակատում մասնակցել է Սանասար Ռուշանի Համբարձումյանը: Երկար ամիսներ սովի ճիրաններում հայտնված քաղաքի պաշտպանները հերոսաբար հետ մղեցին Լենինգրադի արվարձաններ հասած գերմանական «Հյուսիս» բանակախմբի գրոհները՝ վերջիվերջո թույլ չտալով նրանց ներխուժել քաղաք: Սանասար Համբարձումյանը «Լենինգրանդի պատվավոր քաղաքացի» է եւ պարգեւատրվել է «Լենինգրադի պաշտպանության համար» մեդալով:

Մի խումբ գեղամավանցիներ, ունենալով կրտսեր հրամանատարական կոչումներ, տարբեր ռազմաճակատներում մասնակցել են մարտական գործողություններին: Ավագ լեյտենանտ Բենիամին Ռուստամի Խաչատրյանը եւ նրա կրտսեր եղբայր, լեյտենանտ Սանդրո Խաչատրյանը, ավագ լեյտենանտ Արտեմ Արշակի Մկրտչյանը, կրտսեր լեյտենանտ Վարազդատ Վահանի Ասատրյանն իրենց կյանքը զոհաբերեցին հայրենիքի պաշտպանության գործին:

Գեղամավանցիները, ծառայելով հայկական դիվիզիաների կազմում մասնակցեցին խորհրդային բանակի թե՛ պաշտպանողական, թե՛ հարձակողական գործողություններին:

1942թ. օգոստոսի 4-ին ռազմաճակատ մեկնեցին 89-րդ հայկական դիվիզիայի զորամասերը՝ պաշտպանական դիրքեր գրավելով Գրոզնու մատույցներում: Դիվիզիայի «Սեւաստապոլյան» պատվանունը կրող 390-րդ գնդում են ծառայել գեղամավանցիներ Ալեքսո Հակոբյանը, ինչպես նաեւ Գաբրիել եւ Ռաֆայել Սաղաթելյանները: Դիվիզիայի ուժերը 1943թ. հոկտեմբերի 3-ին մտան Թաման քաղաքը եւ արժանացան «Թամանյան» պատվանվանը: Հետագա ամիսներին Թամանյան դիվիզիան շարունակեց իր մարտական ուղին, 1945թ. փետրվարին անցավ Օդեր գետը՝ մասնակցելով Բեռլինի՝ ապրիլի 16-ին սկսված վճռական գրոհին: Փողոցային մարտեր մղելով քաղաքում եւ գրավելով 7 թաղամաս՝ դիվիզիայի մարտիկները պատերազմի ավարտը դիմավորեցին Գերմանիայի մայրաքաղաքում:Գեղամավանցիները պարգեւատրվեցին «Բեռլինի գրավման համար» մեդալներով:

Ուկրաինական ՍՍՀ սահմանամերձ Լվով քաղաքում, Կիեւյան ռազմական օկրուգի 26-րդ բանակի հեծելազորային էսկադրոնի կազմում է ծառայել 1939 թ. բանակ զորակոչված Աղասի Հովակիմի Վարդանյանը: Հունիսի 22-ի առավոտյան ինչպես խորհրդային մյուս սահմանամերձ քաղաքները, այնպես էլ Լվովը, «Հարավ» բանակախմբի ավիացիայի կողմից ենթարկվեցին ավերիչ ռմբակոծության: 26-րդ բանակն ակտիվորեն հակահարձակման դիմելով հունիսի վերջին եւ հուլիսի սկզբին, այնուամենայնիվ, ստիպված եղավ նահանջել եւ դիրքեր գրավել Կիեւից հարավ-արեւմուտք ընկած շրջանում: 1942թ. ձմռանը Աղասի Վարդանյանը ծանր վիրավորվում է եւ միջինասիական հոսպիտալներում երկար բուժումից հետո զորացրվում:

Տարբեր ռազմաճակատներում մարտական գործողություններին մասնակցել են Ավետիք Ալավերդյանը, Ավետիք Բաղալյանը, Աղվան Եսայանը, Բախշի Գեւորգյանը, Դադիկո Ներսիսյանը, Լեւոն Խաչատրյանը, Գեորգի Մարտիրոսյանը, Պարույր Գրիգորյանը եւ հարյուրավոր այլ համագյուղացիներ:

Գեղամավանցիների ջանքերով 1973 թ. մայիսի 9-ին գյուղի բարձունքում հանդիսավորությամբ բացվեց Հայրենական մեծ պատերազմում զոհված համագյուղացիների հիշատակը հավերժացնող հուշարձանը:

Արգիշտի Վարդանյան
Պատմական գիտությունների թեկնածու,Գեղամավանի միջնակարգ դպրոցի տնօրեն

ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԸ ԽՐԱԽՈՒՍԵԼ Է ՄԱՆԿԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻՆ ԵՎ ՍԱՆԵՐԻՆ

Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանը խրախուսել է Կ. Կարապետյանի անվան մանկական գեղարվեստի դպրոցի տնօրեն Մերի Հակոբյանին, ուսմասվար Լուսիկ Պետրոսյանին, մանկավարժներ Սուսաննա Թադեւոսյանին, Նարեկ Խաչատրյանին, Լիաննա Ասատրյանին, Մարի Թադեւոսյանին եւ գեղարվեստի դպրոցի արվեստասեր սաներին՝ մայրաքաղաք Երեւանում կայացած «Էտյուդ» հանրապետական մրցույթ- փառատոնում Գրան պրի բարձրագույն պարգեւը եւ առաջատար հորիզոնականները նվաճելու համար:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, համայնքի ղեկավարը դպրոցի տնօրենին եւ մանկավարժներին արժանացրել է դրամական խրախուսանքի:

«Էտյուդ» փառատոնում գլխավոր մրցանակի է արժանացել Շուշանիկ Սահակյանը:

1-ին տեղ են գրավել Էլմիրա Մարտիրոսյանը, Արկադի Զիրոյանը, Մարի Խլոյանը, Ժասմեն Սահակյանը, Սոնա Շաբոյանը, Սոֆի Կարապետյանը: Երկրոդ տեղ են գրավել Մարինե Սիմոնյանը, Աիդա Խաչատրյանը, Մանվել Ժամհարյանը: Երրորդ տեղ են գրավել Հայկ Շաբոյանը, Էլեն Գրիգորյանը, Վարդան Սեսմանուկյանը, Նեկտար Մուրադյանը:

ՄԱՅԻՍԻՆՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ՍԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼ Է ՎՈԼԵՅԲՈԼԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐ

Մայիսինյան տոների առթիվ Գեղարքունիքի մարզի Սեւան քաղաքում անցկացվել է վոլեյբոլի համայնքային մրցաշար:

Մրցաշարը կազմակերպել են Սեւանի համայնքապետարանը եւ Սեւան համայնքի Ն.Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցը:

Սիրողական վոլեյբոլի համայնքային մրցաշարին մարզական մասնակցության հայտ էին ներկայացրել 20-50 տարեկան մասնակիցներից կազմված թիմեր Սեւան քաղաքից եւ համայնքի բնակավայրերից:

Վոլեյբոլի համայնքային մրցաշարի 1-ին, 2-րդ եւ 3-րդ տեղերը գրաված մասնակիցները Սեւան համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանի անունից խրախուսվել են դրամական պարգեւներով, գավաթներով, մեդալներով եւ հավաստագրերով:

Մրցաշարում 1-ին տեղը գրավել է Սեւան համայնքի Ն.Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցի աշխատակիցների թիմը, 2-րդ տեղը՝ Լճաշեն բնակավայրի տղաների թիմը, 3-րդ տեղը՝ Սեւանի 5-րդ միկրոթաղամասի բնակիչների թիմը:

Արմինե Ղուկասյան

10.qxd 23/05/2025 16:26 Page 7

ՎԱՐԴԵՆԻՍԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՇՆՈՐՀԱՇԱՏ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՄԻՆԱՍՅԱՆ

Վարդենիսի Հ. Համբարձումյանի անվան ավագ դպրոցում քիչ չեն շնորհալի, ուսման առաջավոր աշակերտները, ովքեր աչքի են ընկնում տարբեր ունակություններով ու մեր դպրոցը ճանաչելի են դարձնում մեր համայնքում, մարզում ու դրանց սահմաններից դուրս:

Մեր դպրոցի աշակերտ Մարգարիտա Մինասյանը աչքի է ընկնում իր յուրահատուկ ընդունակություններով:

Մարգարիտան ունի բազմաբնույթ նախասիրություններ, ազատ ժամանակ զբաղվում է պարով, նվագում է շվի, սիրում է ընթերցել գրքեր, եւ յուրահատուկ ընդունակություն ունի՝ խոսում եւ արտահայտում է բառերն ու նախադասությունները հակառակ ուղղությամբ: Տպավորություն է ստեղծվում, թե խոսում է հայելու մեջ երեւացող աշխարհից:

Մարգարիտայի տաղանդը բացահայտվել է 13 տարեկանից, երբ դասերը ընթերցելու ընթացքում սկսել է բառերը հակառակ ուղղությամբ կարդալ: Այդ սովորությունը հետագայում վերածվեց հմտության, եւ Մարգարիտան սկսեց հակառակ խոսել: Այդ տաղանդը սկսեց կիրառել բանաստեղծություններ ասմունքելով՝ ստեղծելով տեսանյութեր: 2023 թվականին դիմել է Հայաստանի ռեկորդների գրքին՝ «Դյուցազնագրքի ասոցիացիային», որտեղ պաշտոնապես գրանցվել է Մարգարիտայի առաջին ռեկորդը: Մարգարիտան ժամանակի ընթացքում զարգացրեց այդ ունակությունը նաեւ այլ լեզուներով՝ ռուսերենով, անգլերենով եւ գրաբարով, եւ գրանցեց երկրորդ ռեկորդը՝ արդեն 4 լեզուներով հակառակ խոսելու կարողության համար: Այս ռեկորդը գրանցվեց ուղիղ հեռարձակման ընթացքում՝ նվիրված մայրության եւ գեղեցկության օրվան:

***

Մեր դպրոցի «Արմաթ» ճարտարագիտական լաբորատորիայի սան Աշոտ Զաքոյանն աչքի է ընկնում հատկապես ՏՏ ոլորտում, նա նորարար մտածելակերպով է, միշտ առաջ է մղում թվային լուծումները՝ անկախ դրա բարդությունից: Համադրում է ծրագրավորման, արհեստական բանականության, տվյալների վերլուծության զարգացումը: Աչքի է ընկնում վերլուծական մտածողությամբ, արագ որոշումներ կայացնելու ունակությամբ, թվային համագործակցության գերազանց հմտությամբ, տեխնոլոգիաների նկատմամբ ոգեշնչվածությամբ, ինովացիոն եւ ստեղծագործ մոտեցմամբ:

Աշոտին հաճախ կարելի է տեսնել գործնական քննարկումներում, ֆորումներում, մրցույթներում: Նա մասնակցել է «Նորարարության զարգացման ՕՍՄ գաղափարի մրցույթ հանուն Գեղարքունիքի մարզի, երիտասարդության միջազգային օրվան ընդառաջ» կազմակերպած մրցույթին ու «Թվային նորարարություն» անվանակարգում հաղթող է ճանաչվել ու արժանացել 1000 դոլար մրցանակի:

ԱՇՈՏ ԶԱՔՈՅԱՆ

«ԴեմԱռԴեմ» 2025-ին եղել է որպես պատանի խոսնակ: ԴեմԱռԴեմ-ը մարզային ֆորում է, որի նպատակն է՝ ներկայանալու հարթակ տրամադրել յուրահատուկ փորձառություն ունեցող երեխաներին: Ֆորումին նա խոսել է մենթորության կարեւորության, ինչպես նաեւ համապատասխան մենթորների կարեւորության մասին:

Աշոտի ակտիվ աշխատանքների շնորհիվ ռեԱրմենիայում տեղադրվեց 1000000 դրամի դրամաշնորհի ծրագիր՝ Վարդենիսի ավագ դպրոցում գործող «Արմաթ» ճարտարագիտական լաբորատորիան վերազինելու համար, եւ ի ուրախություն մեզ, գումարը հավաքագրվեց եւ նախահաշվով նախատեսված ապրանքները կարողացանք ձեռք բերել:

Աշոտը նաեւ գրել է «Ապագա Հայկականը» առաջին համահայկական քաղաքացիական Համաժողովի մասնակիցների վիճակահանությունն իրականացնող ծրագիրը

***

Դպրոցի շնորհալիներից է նաեւ էլեն Գապոյանը, ով աչքի է ընկնում նկարչական ձիրքով: Էլենը 2019 թվականից հաճախել է Վարդենիսի Կոմիտաս Կարապետյանի անվան գեղարվեստի դպրոց: Էլենի արվեստին բնորոշ են՝ թեժ վառ գույները, խոր հագեցվածությունը, բնության ու արեւոտ լույսի ուժեղ արտահայտումը, հուզական ազդեցությունը:

ԷԼԵՆ ԳԱՊՈՅԱՆ

Էլենը մասնակցել է մի շարք ցուցահանդեսների, փառատոների, արժանացել բարձր գնահատանքի, պատվոգրերի, դիպլոմների: Նրա աշխատանքներով զարդարվում են մեր դպրոցում կազմակերպվող միջոցառումները:

***

Մեր դպրոցի բազմաշնորհ եւ բազմատաղանդ սաներից է Արամ Ժամհարյանը: Արամը ակտիվ եւ արկածների սիրահար մարդ է, ում կյանքում շարժումն ու բնության հետ կապը մեծ դեր ունեն: Նրա համար շաբաթավերջը լավագույնս անցնում է լեռնային արահետներով արշավելու կամ բարձր լեռներ հաղթահարելու ընթացքում: Արշավներ է կազմակերպել Մասրիկ գետ, Դարանակի մոտակա անտառներ: Քայլելու ռեկորդը եղել է 26 կմ: Բարձրացել է Արտանիշ լեռը (2461մ): Այնտեղ հանդիպել է քանդված տաճարի մնացորդների, որը հայտնի է դարձել վերջին 2 տարում: Բարձրացել է նաեւ Արմաղան լեռը (2829մ): Ձկնորսությունը նրա համար ոչ միայն հոբբի է, այլ նաեւ հանգստանալու եւ մտքերը կարգավորելու լավագույն ձեւերից մեկը:

ԱՐԱՄ ԺԱՄՀԱՐՅԱՆ

Արամը նաեւ սպորտով է զբաղվում՝ դա լինի վազք, ուժային վարժություններ, թե թիմային խաղեր: Մշտապես ձգտում է պահպանել լավ ֆիզիկական վիճակ, բարձր դիմացկունություն եւ առողջ ապրելակերպ: Բնության հանդեպ ունեցած սերն ու հարգանքը նրան դարձրել են շրջակա միջավայրի պահպանության նկատմամբ հոգատար:Մշակում է տարբեր տեսակի բույսեր, ունի շատ կենդանիներ, ինչպես նաեւ հազվագյուտ քարերի հավաքածու՝ Վարդենիսից եւ այլ մարզերից: Ուսումնասիրել է ողջ Վարդենիսի տարածքը եւ ոչ միայն: Արշավների ժամանակ հայտնաբերել է երեք լճակ, չորս մեծ քարանձավ, պատկերներ քարերի վրա եւ տարբեր հնություններ:

Արամը իր նպատակասլացությամբ եւ կամքի ուժով հաճախ ծառայում է որպես ոգեշնչման աղբյուր շրջապատի համար:

***

Վարդենիսի ավագ դպրոցի շնորհալի սաներից է Տաթեւ Կարոյանը՝ 17-ամյա աղջիկ, ով սիրում է ստեղծել՝ խոսքի, ձեռքի ու սրտի միջոցով: Ասմունքը Տաթեւի ուղեկիցն է եղել դեռ մանկուց: Սոցիալական ցանցերում իր առաջին տեսահոլովակները տեղադրելով՝ նա արդեն զգում էր խոսքի ուժը: 2019 թվականին իր գրող-հրապարակախոս ընկերներից մեկի առաջարկով Տաթեւը առաջին անգամ բեմ բարձրացավ Մշակույթի պալատում՝ ասմունքելով նրա ստեղծագործություններից մեկը: Այդ օրվանից բեմը դարձավ Տաթեւի սիրելի վայրը, իսկ խոսքը՝ նրա ամենազորեղ արտահայտչամիջոցը: Տաթեւը մասնակցել է մի շարք ասմունքի մրցույթների՝ վերջերս գրանցելով նշանակալի հաղթանակներ: Նոյեմբերի ամսին կայացած «Global International Art Fest» միջազգային մրցույթ-փառատոնում նա գրավել է առաջին հորիզոնականը եւ արժանացել հատուկ մրցանակի՝ ժամանակակից խոսքի լավագույն մատուցման համար: Իսկ մարտ ամսին տեղի ունեցած «ՍԵԴՖԵՍՏ» Անհատ կատարողների եւ ստեղծագործական խմբերի միջմարզային 5-րդ փառատոնում հաղթել է գլխավոր մրցանակը՝ եւս մեկ անգամ վերահաստատելով իր հզոր ներկայությունն ասմունքի ասպարեզում: Բացի ասմունքից, Տաթեւը սիրում է ձեռագործ աշխատանքներ: Նա նույնիսկ ունեցել է իր փոքրիկ բիզնեսը՝ զբաղվելով գործվածքների ստեղծմամբ ու վաճառքով: Ստեղծելու, ինքնարտահայտվելու, եւ նախաձեռնող լինելու ձգտումը Տաթեւին մղում է շարունակ փնտրելու ու փորձելու նոր ուղղություններ: Տաթեւի ոգեշնչման աղբյուրներից են լեռները: Նա երազում է ոչ միայն ելույթ ունենալ արտերկրում՝ հատկապես Շվեյցարիայում, այլեւ լինել Հայաստանի յուրաքանչյուր անկյունում՝ զգալու մեր լեռների թե՛ խրոխտությունը, թե՛ նրբությունը: Նրա համար ասմունքը ոչ միայն արվեստ է, այլ մի ճանապարհ՝ աշխարհին խոստովանելու իր զգացմունքներն ու սերը կյանքի, մարդկանց ու հայրենիքի հանդեպ:

ՏԱԹԵՎ ԿԱՐՈՅԱՆ

Մայա Ոսկանյան
Վարդենիսի ավագ դպրոցի տնօրեն

ԵՐԱՆՈՍ ԳՅՈՒՂՈՒՄ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՆՈՐ ՇԵՆՔ Է ԿԱՌՈՒՑՎՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Երանոս գյուղում 2025 թվականի ապրիլից մեկնարկել և ընթանում են թիվ 2 միջնակարգ դպրոցի նոր շենքի կառուցման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրեց Երանոսի թիվ 2 միջնակարգ դպրոցի տնօրեն Ասլի Գրիգորյանը, շինարարական աշխատանքներն ընթանում են ,Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ: Ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 2 միլիարդ 490 միլիոն 813 հազար դրամ: Նոր դպրոցական շենքը կառուցվում է ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում: Դպրոցական նոր շենքը կառուցվում է հին դպրոցի տեղում: Այս պահին ընթանում են քանդման աշխատանքները:

288 տեղանոց նոր դպրոցը նախագծով լինելու է երկհարկ և եռահարկ կառույց, 4 մասնաշենքով, 8900 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով: Երկու մասնաշենքերը լինելու են եռահարկ, 1-ը՝ երկհարկ, իսկ 1 մասնաշենքը լինելու է մարզադահլիճը:

Երանոսի թիվ 2 միջնակարգ դպրոցի դասաժամերը կազմակերպվում են Երանոսի թիվ 1 միջնակարգ դպրոցի շենքում:

2025 թվականի մայիսի 20-ի դրությամբ Երանոսի թիվ 2 միջնակարգ դպրոց են հաճախում 236 աշակերտ:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «Վի Քեյ Գրուպ» ընկերությունը:

10.qxd 23/05/2025 16:26 Page 8

/սկիզբը՝ նախորդ համարներում/

-Տղա է, աչքներդ լույս,- բղավեց տատմերը:

Վագոնում նույնիսկ լսվեց ծափերի ձայն: Նորածնի հորը շնորհավորեցին, ուրախացան նաեւ զինվորները, որոնք, միաժամանակ շնորհավորեցին Գոհարենց ընտանիքին հսկող զինվորին, որ իրեն հանձնած մարդկանց թիվը մեկ մարդով էլ գերակատարված կհասցնի աքսորավայր:

-Հորով-մորով մեծանա,- լսվում էին վագոնի տարբեր մասերից:

-Թող ազատ ու երջանիկ լինի,- բղավեց մի տարեց մարդ:

Նորածնի հայրը աջ ու ձախ շնորհակալություն էր հայտնում: Նա իր ունեցած հարյուր ռուբլուց հիսունը տվեց տատմորը՝ որպես աչքալուսանք: Աքսորվողները որոշեցին դառնալ խումբ-քավոր եւ անվանակոչել նորածին տղային: Առաջարկվեցին մի շարք անուններ՝ Աքսոր, Դժբախտ, Պանդուխտ, Թշվառ եւ այլն: Առաջարկվեց նաեւ տղային անվանակոչել Հույս /Հուսիկ/: Այդ անվանակոչումը խորհրդանշում էր լավատեսություն եւ հավատ հետագայի նկատմամբ: Աքսորվողներից ոչ մեկը արդարության վրա չէր կասկածում: Ավելին, իրենց նկատմամբ այդ անարդարացի վարմունքն էլ համարում էին ինչ-որ դավաճան մարդու թելադրանք: Այնպես որ, Հույսի լույս աշխարհ գալը որոշ աշխուժություն մտցրեց տխուր վագոնում:

Կանայք մի անկյունում ձեռքներին բռնած շորերով վարագույր էին սարքել եւ իրենց գիտցած ձեւով խնամում էին մորն ու մանկանը:

Երեխային Հույս անվանակոչելը դուր է գալիս նաեւ Դունուշին, որը, ձեռքի ափը ցավոտ ճակատին սեղմած, մտածում էր իր բախտի մասին: Նրա միամիտ սրտում ծագած՝ Տիգրանին աքսորավայրում հանդիպելու հույսը գնալով ուժեղանում էր՝ առանց որեւէ հիմքի: Մտքում Դունուշը տեսնում էր աքսորականի հագուստով, խեղճ ու տկար Տիգրանին, փաթաթվում ու համբուրում էր նրան եւ աղի արցունք թափում իրենց անմեղ ընտանիքի կործանման համար: Մտածում էր ու սթափվում այնպես, ինչպես քնած մարդը արթնանում է անավարտ երազի պահին: Գնացքն ու Արաքսն ընթանում էին թեւանցուկ արած սգավորների պես՝ իրենց հետ տանելով աքսորվողների վշտից գոյացած ամպը:

Հասան Բաքու: Կայարանում կանգ առան մի քանի րոպե՝ առանց վագոնների դռները բացելու: Այնուհետեւ գնացքները շարժվեցին շատերի համար անծանոթ ճանապարհով: Երկու օր հետո վագոնները լցվեց տափաստանի շունչը, եւ կլիմայի փոփոխությունն զգալի դարձավ բոլորի համար: Շուտով առաջին գնացքը կանգ առավ Ալթայի երկրամասի Սլավգորոդի կայարանում: Ուղեկցող զինվորներից բացի, այնտեղ էին բերել նաեւ սիբիրյան զորամասերի զինվորականների, որոնց հսկողությամբ աքսորականները իջան վագոններից եւ իրենց իրերով տեղավորվեցին մի մեծ հրապարակում: Տափաստանային չոր քամին մոլեգնում էր հրապարակով մեկ եւ փոշու մեջ ծածկում կուչ եկած աքսորականներին: Մայրը շորերով ծածկել էր Հույսին եւ սեղմել կրծքին: Դունուշն ու Ռափոն ձեռքերով տրորում էին իրենց աչքերը: Այդ՝ Սիբիրի հարավարեւմտյան մասում տարածված Կուլունդայի տափաստանն էր, իր չոր եղանակով եւ ուժեղ քամիներով:

Երկու օր հետո չոր ու փոշոտ հրապարակը դատարկված էր: Նրանց բոլորին ընտանիք առ ընտանիք տեղափոխել ու տեղավորել էին երկրամասի ոչ մեծ գյուղերում: Դունուշը, Եղոն, Սարոն, Ռուբենը, դարանլուղցի Հայկարամը իրենց ընտանիքներով ու գաղթական Մուշեղի տղա Ստեփանը տեղավորվեցին Պակրովկա կոչվող գյուղսովետի գյուղերից մեկում, որը կոչվում էր Կրիժանովկա: Այդ գյուղի կոլտնտեսության ղեկավարները նորաբնակների համար ապրելու որոշ հարմարություններ էին ստեղծել:

Հենց առաջին գիշերը մահացավ փոքրիկ Եղիշը՝ Հայկարամի եւ Զարուհու առաջին պտուղը: Երեխայի մահը ցնցող ազդեցություն գործեց ծնողների եւ հայրենակիցների վրա: Վշտացան նաեւ Կրիժանովկա գյուղի մարդիկ: Ամենափոքր աքսորականը աքսորավայրում մեկ օր էլ չապրեց: Նա մեռավ մոր գրկի մեջ, հարազատ մոր համբույրների ու արցունքների առատության մեջ: Սակայն աքսորանքի հետ կապված ավանդական դառնությունն ու հայրական օջախից զուրկ լինելը այնպիսի տպավորություն էին ստեղծում, որ Եղիշը հայր ու մայր չունեցող, անտեր երեխա է: Լալիս էր մայրն ու երգելով բացականչում.

-Եղիշ ջան, քո հայրենի հողին էլ արժանի չեղար, քո հարազատների գերեզմանում էլ չթաղվեցիր, մենք չենք կարող քո դիակը լողացնել մեր գյուղի զուլալ աղբյուրների ջրով, Եղիշ ջան, իմ անմեղ երեխա:

Նեղլիկ խրճիթում հավաքված՝ լալիս էին նորաբնակները, մեծ ու փոքր: Լալիս էին կրիժանովկացի բարի կանանցից շատերը եւ ռուսական երգերով օրհնում մատաղ ահնգուցյալին: Սակայն ուրիշ էին աքսորականների արցունքները. դրանք քար էին ծակում: Կրիժանովկա գյուղն ուներ ընդամենը երեսուն տուն, մոտ հարյուր հիսուն բնակչությամբ: Եղիշի հուղարկավորությանը մասնակցեց ամբողջ գյուղը, սկսած 15 տարեկան պատանիներից, վերջացրած ծերունիներով: Գյուղի ոչ մեծ գերեզմանոցում իր տեղն ունեցավ փոքրիկ Եղիշի հողաթումբը՝ թրջված բազմաթիվ աչքերի տաք արցունքներով: Ու թաղման օրվանից հետո երկար ժամանակ Զարուհին ու Հայկարամը այցելում էին իրենց Եղիշին, լալիս, մղկտում էին նրա գերեզմանին ու իրենց վշտի հեղեղը թափում այնտեղ: Նրանք հորինել էին Եղիշին նվիրված սգերգը.

Սյունաց աշխարհից աքսորված ծագուկ,
Քո տառապանքը ինչպե՞ս մոռանամ,
Տանջված, տրորված, անլեզու մանուկ,
Քո հոգեվարքը ինչպե՞ս մոռանամ:
Շունչդ փչեցիր հեռու Սիբիրում,
Անմեղ հայացքդ ինչպե՞ս մոռանամ,
Լացդ հնչում է հոգուս ծալքերում,
Քո հեկեկանքը ինչպե՞ս մոռանամ:
Իմ նուրբ ու նախշուն, անուշիկ գառնուկ,
Պանդուխտ շիրիմդ ինչպե՞ս մոռանամ,
Ո՞ր մեղքիդ համար քեզ աքսորեցին,
Քո աքսորանքը ինչպե՞ս մոռանամ:
Սյունյաց աշխարհից աքսորված ծագուկ,
Քո տառապանքը ինչպե՞ս մոռանամ,
Տանջված, տրորված, անլեզու մանուկ,
Քո հոգեվարքը ինչպե՞ս մոռանամ:

Կրիժանովկայի մարդիկ ազնիվ, աշխատասեր ու բարի էին, նրանք հոգատարությամբ էին շրջապատել նորաբնակներին եւ իրենց վերաբերմունքով թեթեւացնում էին նրանց հոգսերը:

/շարունակելի/
Արտաշ Ստեփանյան

ԱՎԱՐՏՎԵԼ ԵՆ «ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ» ՍԻՐՈՂԱԿԱՆ ԽՃՈՒՂԱՅԻՆ ՀԵԾԱՆՎԱՎԱԶՔԻ ՄՐՑԱՇԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՓՈՒԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզում արդեն ավարտվել են «ՀՀ Վարչապետի գավաթ» սիրողական խճուղային հեծանվավազքի մրցաշարի համայնքային փուլի մրցումները: Մրցաշարն անցկացվել է 2 տարիքային խմբերով: Առաջին տարիքային խմբում հանդես եկող թիմի կազմում ընդգրկվում են նույն դպրոցի 7-9-րդ դասարաններում սովորող 1 տղա եւ 1 աղջիկ, իսկ երկրորդ տարիքային խմբում՝ 10-12-րդ դասարաններում սովորող 2 տղա եւ 2 աղջիկ:

Գեղարքունիքի մարզում առաջինը մրցապայքարի մեջ են մտել Սեւան համայնքի հանրակրթական ուսումնական հաստատությունների թիմերը: Սեւանի համայնքային փուլի մրցումները անցկացվել են 2025 թվականի մայիսի 6-ին, Դրախտիկ-Ծովագյուղի խաչմերուկ 25 կիլոմետրանոց ճանապարհահատվածում: Այստեղ 1-ին տարիքային խմբում առաջի տեղը գրավել է Սեւանի Մեսրոպ Մաշտոցի անվան N 1 հիմնական դպրոցի թիմը, երկրորդ հորիզոնականում՝ Սեւանի N 4 հիմնական դպրոցի թիմն է, իսկ մրցանակային եռյակը եզրափակել է Չկալովկայի միջնակարգ դպրոցի թիմը: 2-րդ տարքային խմբում ուժեղագույնը Վարսերի Ռ. Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոցի թիմն էր, երկրորդ տեղում է Լճաշենի Ա. Տեր-Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցի թիմը, իսկ երրորդ հորիզոնականում՝ Ծաղկունքի բաց դպրոցի թիմն էր:

Ճամբարակի եւ Գավառի համայնքային փուլերը կազմակերպվել են մայիսի 8-ին: Գավառի համայնքային փուլի մրցումներն անցկացվել են Նորատուս-Լիճք բնակավայրերի միջեւ ընկած ավտոմայրուղու 25 կիլոմետրանոց ճանապարահատվածում: Առաջին տարիքային խմբում 1-ին, 2-րդ եւ 3-րդ տեղերը համապատասխանաբար գրավել են Գավառի Հ. Թումանյանի անվան N 3 հիմնական, Գավառի Ա. Իսահակյանի անվան N 4 հիմնական եւ Գանձակի N 2 միջնակարգ դպրոցների թիմերը, իսկ երկրորդ տարիքայի խմբում՝ Ծովազարդի, Հայրավանքի եւ Գանձակի N 2 միջնակարգ դպրոցների թիմերը:

Ճամբարակի համայնքային փուլի մրցումներն անցկացվել են Շողակաթ-«Արեւիկ» հանգստյան գոտու 25 կիլոմետրանոց ճանապարհահատվածում: Առաջին տարիքային խմբում ուժեղագույնը Մարտունի գյուղի միջնակարգ դպրոցի թիմն էր, երկրորդ տեղում էր Գետիկի, իսկ երրորդ տեղում՝ Թթուջրի միջնակարգ դպրոցների թիմերն էին: 2-րդ տարիքային խմբում առաջինը Գետիկի միջնակարգ դպրոցի թիմն էր, իսկ երկրորդ եւ երրորդ հորիզոնականները զբաղացրել են Թթուջրի եւ Մարտունի գյուղի միջնակարգ դպրոցների թիմերը:

Մարտունու համայնքային փուլի մրցումներն անցկացվել են մայիսի 13-ին, Վաղաշեն-Կարճաղբյուր 25 կիլոմետրանոց ճանապարհահատվածում: Այս փուլի մեկնարկին ներկա է եղել ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը: Առաջին եւ երկրորդ տարիքային խմբերում հաղթող է ճանաչվել Վաղաշենի միջնակարգ դպրոցի թիմը, իսկ երկրորդը՝ Ծակքարի միջնակարգ դպրոցի թիմն էր: Առաջին տարիքային խմբում երրորդ տեղը գրավեց Ձորագյուղի Հայրիկ Ղազարյանի անվան հիմնական, իսկ երկրորդ տարիքային խմբում՝ Վարդաձորի միջնակարգ դպրոցների թիմերը: Վարդենիսի համայնքային փուլի մրցումներն անցկացվել են մայիսի 14-ին, Մեծ Մասրիկ- Դարանակ ճանապահի 25 կիլոմետրանոց ճանապարհահատվածում: Այստեղ առաջին տարիքային խմբում ուժեղագույնը Վանեւանի միջնակարգ դպրոցի թիմն էր, երկրորդ հորիզոնականում Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկի, իսկ երրորդում՝ Լճավանի Ա. Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոցների թիմերն էին: Երկրորդ տարիքային խմբում 1-ին, 2-րդ եւ 3-րդ տեղեր գրավել են համապատասխանաբար Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկի, Լճավանի Ա. Խաչատրյանի անվան եւ Մաքենիսի միջնակարգ դպրոցների թիմերը:

Համայնքային փուլի բոլոր մրցումների մրցանակային տեղեր գրված թիմերին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության կողմից հանձնվել են հավաստագրեր:

Ըստ տարիքային խմբերի մարզի հինգ համայնքային փուլերում 1-ին, 2-րդ եւ 3-րդ տեղերը գրված թիմերը 2025 թվականի մայիսի 30-ին կմասնակցեն ՀՀ Գեղարքունիքի մարզային փուլի մրցումներին:

Գեղամ Չարվադարյան

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏՈՒՄ ԸՆԴՈՒՆՎԵԼ ԵՆ ԿԱՐԵՎՈՐ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Կայացել է Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի ավագանու 7-րդ նստաշրջանի 4-րդ նիստը, որը վարել է Սեւան համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանը:

Ինչպես տեղեկացրին Սեւանի համայնքապետարանի աշխատակազմից, ավագանու հերթական նիստին ներկայացված օրակարգային հարցերը հաստատելուց հետո դրանք ներկայացվել են քննարկման:

Սեւան համայնքի ավագանու որոշմամբ տրանսպորտային 5 միջոց՝ բազմաֆունկցիոնալ էքսկավատորը, բազմաֆունկցիոնալ մինի ամբարձիչը, գրեյդերը, երկու ինքնաթափ, որոնք Սեւան համայնքը ստացել է, «Համաշխարհային բանկի» ֆինանսավորմամբ եւ «Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի» կողմից իրականացվող «Սոցիալական ներդրումների եւ տեղական զարգացման ծրագրի Բաղադրիչ 2» ծրագրի շրջանակներում, փուլային կարգով, անհատույց օգտագործման իրավունքով փոխանցվել է «Սեւանի կոմունալ սպասարկում եւ բարեկարգում» ՀՈԱԿ-ի հաշվեկշռին: Այդ եւ նախկինում ՀՈԱԿ-ին փոխանցված եւս երկու կոմունալ տրանսպորտային միջոց կօգտագործվեն Սեւան համայնքում կոմունալ սպասարկման աշխատանքների կազմակերպման նպատակով:

Ավագանու մեկ այլ որոշմամբ Սեւան համայնքի Գագարին բնակավայրում Ազատամարտիկների անվամբ փողոց է անվանակոչվել:

Սեւան համայնքի ավագանին նախնական համաձայնություն է տվել «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից Սեւան քաղաքում երկհարկանի դիահերձարանի կառուցման նախագծային փաստաթղթերին:

Մեկ այլ որոշմամբ նախնական համաձայնություն է տրվել նաեւ Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի Ծովագյուղ բնակավայրում նոր Հանգստի գոտու կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը:

Նիստին ներկայացված մյուս հարցերը եւս հաստատվել են որոշումներով:

Սեւան համայնքի ղեկավարին եւ ավագանուն հասցեագրված մի շարք դիմումներ համապատասխան որոշումներով ամրագրվել են, որոշ դիմումներ լրացուցիչ կուսումնասիրվեն:

Նիստի ընթացքում Սեւան համայնքի ավագանու անդամների կողմից բարձրաձայնվել են համայնքային նշանակության մի շարք հարցեր, արվել են առաջարկություններ:

Սեւան համայնքի ավագանու 7-րդ նստաշրջանի վերջին նիստը կկայանա հունիս ամսին:

Արմինե Ղուկասյան

ԳԵՂԱՄԱ աշխարհ
Լրատվական գործունեություն իրականացնող «Գեղարքունիք» թերթի խմբագրություն» ՓԲԸ: Հասցեն՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
էլ.հասցե՝ khosrov1@yandex. ru
Գլխավոր խմբագիր՝ Խոսրով Խլղաթյան
հեռ. բջջ. 094022692

Վկայական՝ 02 Ա 050560: Գրանցման համարը՝ 25.120.00834:
Տրված 07.05.2001թ.: Տպաքանակը՝ 1000: Ծավալը՝ 2 մամուլ:
Թողարկման օրը՝ 23. 05. 2025 թ.:
Տպագրվում է «Սամարկ» ՍՊԸ տպարանում:
«Գեղամա աշխարհ» թերթի բոլոր համարներին կարող եք ծանոթանալ https://tert.nla.am կայքում: